Azg Ազգ

9 ՅՈՒԼԻՍ 1999 ՈՒՐԲԱԹ #126 (1871)

Ռուս-բելառուսական պետություն ստեղծելու պայմանագիր կկնքվի աշնանը

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի վարչապետ Ս. Ստեպաշինն ասել է, թե արդեն աշնանը կստորագրվի Ռուս-բելառուսական միութենական պետություն ստեղծելու պայմանագիրը: Ելույթ ունենալով միութենական գործկոմում, Ստեպաշինն առաջարկել է պայմանագրի հետ մեկտեղ նախապատրաստել նաեւ դրա իրականացման ծրագիրը՝ ժամկետների ճշգրիտ նշմամբ: Ռուսաստանի կենտրոնական բանկի փոխնախագահ Մոժայկոն հայտնել է, որ պետության միասնական արժույթը պետք է լինի ռուսական ռուբլին, որն աստիճանաբար կներդրվի 1999-2008 թթ.:

«Ռուսաստանը տանուլ տվեց Հարավսլավիայում»

ՄԻՆՍԿ, 8 ՀՈՒՆԻՍ, ՄՆԱՐՔ: Ռուսաստանը տանուլ տվեց Հարավսլավիայի պատերազմում: Կոսովոյում Ռուսաստանի խաղաղարարների առկայությունը զգալի դեր չի խաղում, լրագրողներին հայտարարել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն: Նա ընդսմին խոստովանել է, որ Բելառուսը նույնպես «տանուլ տվեց»: Լուկաշենկոյի կարծիքով, «զինվորականները պետք է հերթական քայլ կատարեին՝ Կոսովո նետեին մի քանի հազար մարդ՝ մեծ Ռուսաստանին արժանի դիրքեր գրավելու նպատակով»:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսի հուղարկավորությունը

ՍՊ. ԷՋՄԻԱԾԻՆ, 8 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսը, որ իր կյանքի 67 տարիներից ընդամենը չորսն էր անցկացրել մայր հողի վրա, իր ելույթներից մեկում ասել էր, որ ինքը կարծես երեկ չէր եկել այստեղ, կարծես միշտ էլ այստեղ է եղել: Այստեղ էլ նա գտավ իր վերջին հանգրվանը. հուլիսի 8-ին Մայր աթոռ սբ. Էջմիածնում տեղի ունեցավ Նորին Սրբության հուղարկավորությունը հոգեւոր ամենաբարձր կարգերով ու կանոններով:

Թեեւ արդեն Մայր տաճարում ավարտվել էր պաշտոնական հրաժեշտի արարողությունը, վաղ առավոտից դեռի սբ. Էջմիածին էին շտապում հավատացյալները, վերջին անգամ տեսնելու դեռի հավերժն ընթացող ճամփորդին, որի մարմինը դրված էր Մայր տաճարի գավիթում: Մայր տաճարը «շրջափակվել» էր պսակներով. պսակներ էին դրված ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՄԱԿ-ի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, այլ կազմակերպությունների ու անհատների կողմից:

Տես էջ 3

ԼՂՀ

Ա. Ղուկասյան. Աղակայունացման փորձերին պետք է պատասխանեմ համապատասխան միջոցներով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 8 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 7-ին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահության անդամների հետ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հանդիպմանը մտքեր փոխանակվեցին հանրապետությունում ստեղծված ներքաղաքական իրադրության վերաբերյալ:

Ինչպես հաղորդում է ԼՂՀ նախագահի մամլո ծառայությունը, Արկադի Ղուկասյանը վերստին հայտարարեց, որ իր բոլոր գործողությունները թելադրված են Լեռնային Ղարաբաղում օրինականություն եւ կարգ հաստատելու ձգտմամբ, բայց ոմանք ձգտում են տարբեր եղանակներով դրան խոչընդոտել: Միաժամանակ նա նշեց, որ ձեռնարկվում են քայլեր, որոնք ոչնչահարում են ոչ միայն քաղաքական պայքարի, այլեւ տարրական բարոյական նորմերը: «Ես ոչ մեկին պատերազմ չեմ հայտարարել, բայց հանրապետությունում իրադրության աղակայունացման փորձերին ես պետք է պատասխանեմ համարժեք միջոցներով», ընդգծեց Արկադի Ղուկասյանը:

Նախագահության անդամները, իրենց հերթին, հայտնեցին, որ պատշաճում են այն նիստաշրջանը, որ որոշել է նախագահը, սակայն լրջորեն անհանգստացնում է առաջացած իրավիճակը: Գործնականորեն բոլոր ելույթ ունեցողները նշեցին, որ անհրաժեշտ է գտնել երկխոսության եւ փոխզիջման դաշտ՝ կանխելու իրադրության հնարավոր սրումը:

Խորհրդարանի նախագահ Օլեգ Եսայանը հավաստեց պատգամավորների պատասխանատվությունը՝ իրենց ընտրողներին պարզաբանել իրավիճակը, ընդգծելով, որ խորհրդարանը պետք է նման իրավիճակում կատարի կայունացնող գործոնի գործառույթներ:

Ռոբերտ Քոչարյանը կմեկնի Ստեփանակերտ հաշտարար առաքելությամբ

«Ազգն» արդեն թեականորեն ծանուցել էր նախագահ Ռոբերտ Քոչարյանի Ստեփանակերտ այցելելու մտադրության մասին, երեկ իրազեկ աղբյուրները հաղորդեցին, որ հանրապետության նախագահն այսօր կլինի Ստեփանակերտում: Ոչ սանդարտ իրավիճակը պահանջում է համահունչ մոտեցում, եւ ի պատիվ Ռոբերտ Քոչարյանի, կարելի է նշել, որ նա չհապաղեց ցուցաբերելու այդ մոտեցումը: Ռոբերտ Քոչարյանի այցը Ստեփանակերտ, կարծում ենք, կլինի այն կամուրջը, որը կմիավորի իրարից հեռացող լեռնային գեսի երկու ափերը: ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը եւ վարչապետ Անուշավան Դանիելյանը, ինչպես նաեւ պատգամավոր Սամվել Բաբայանը, որը դեռեւս չի տվել իր պատգամավորական հավատարմագիրը, ինչպես նաեւ պատասխանատվությունը վերահաստատվելու այս պատգամավորական համաձայնությունը վերահաստատվելու այս պատգամավորական համաձայնությունը վերահաստատվելու այս պատգամավորական համաձայն

ԱԶԳ

ՈՄԲԱՑԻԿ

SOS

Տուբերկուլոզը աղաղակում է

Տուբերկուլոզը վարակիչ հիվանդություն է, որն առաջացնում է Կոխի ցուտիկ, հարուցիչը, որը թափանցում է օրգանիզմ եւ զարգանում իրեն հարմար միջավայրում: Հիվանդության առաջացմանը նպաստում են թերսնումը սրբեսային ֆակտորները: Ցուտիկներն ավելի արագ են զարգանում շարախտով եւ խոցային հիվանդություններով տառապող հիվանդների, նաեւ սպիդով եւ հատկապես թոքաբորբով հիվանդների մոտ: Եթե սպիդի տարածման ճանապարհը հայտնի է, ապա տուբերկուլոզի ցուտիկն աննկատ գտնվում է նաեւ օդի մեջ, որը շնչում ենք յուրաքանչյուրս: Դա լուրջ պրոբլեմ է, որից միայն 20-25 տոկոսն է բժշկական պրոբլեմ, մնացած 75 տոկոսը սոցիալական եւ էկոլոգիական պրոբլեմներ են եւ այդ է պատճառը, որ առողջապահության նախարար Հ. Նիկողոսյանը դիմել էր նախկին վարչապետ Ա. Դարբինյանին, որի հրամանով էլ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որտեղ ընդգրկվել են տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներ: Մայիսի վերջին կայացել է անդրանիկ նիստը, որը շոշափել է նաեւ առեւտրի հետ կապված հարցեր: Չի բացառվում, որ փողոցային առեւտրով զբաղվողները հանդիսանան վարակի աղբյուր՝ լինելով տուբերկուլոզով հիվանդ: Նախատեսվում է, որ սննդի ոլորտում աշխատողները տարին երկու անգամ բժշկական պարտադիր սուգում անցնեն: Ներկայումս փողոցային առեւտրով զբաղվածների միայն 20 տոկոսն ունի սանիտարական սուգման գրքույկ:

Եթե 2-3 շաբաթ հազում են, զգացվում է թուլություն, ջերմության բարձրացում եւ քրտնարտադրություն, ապա անհապաղ պետք է դիմել բժշկի: Ըստ վերջին ցուցանիշների՝ ազգաբնակչության 10-ից 1-ի մոտ հայտնաբերվում է տուբերկուլոզ: Պետությունների մեջ են մտած տուբերկուլոզի ի բոլոր ձեւերի բուժումը: Այն անվճար է, սակայն դրանց մեջ չեն մտել այդ հիվանդությամբ կասկածյալների սուգումը, ինչը լուրջ խոչընդոտ է հանդիսանում հիվանդության կանխման գործում: Ինչպես պարզաբանեց հանրապետական տուբերկուլոզային դիսպանսերի գլխավոր բժիշկ Ռուդոլֆ Հովսեփյանը, հանրապետության միակ հիվանդանոցը գտնվում է աղետալի վիճակում, չկան առաջին անհրաժեշտության ախտահանիչ ու լվացման պարագաներ: Աբովյանի հիվանդանոցից կեղտաջրերը թափվում են ընդհանուր կոյուղու ցանց: Անհրաժեշտ է 320 մլն դրամ՝ վարակազերծող սարքեր ձեռք բերելու համար, որը նախատեսված չէ բյուջեով: Հիվանդանոցը չունի ջուր, մի քանի տարաներով հավաքվող ջրով հնարավոր չէ պահպանել սանիտարական նորմերը: Հիվանդանոցը խոհանոցում չունի անգամ աքոռ, սեղան, սպասք, էլ չեմ ասում սառնարան, լողարան, իսկ մահճակալները 25-30 տարվա վաղեմություն ունեն, մինչդեռ հիվանդը 8 ամիս պարտադիր պետք է գտնվի հիվանդանոցում՝ հսկողության տակ: Հատկապես մեծ է բանտերում տուբերկուլոզով տառապող հիվանդների թվերը: Ավելի վատթար վիճակում էր հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքը, ուր վիրահատարանի պատերից ամեն

ների մոտ: Եթե սպիդի տարածման ճանապարհը հայտնի է, ապա տուբերկուլոզի ցուտիկն աննկատ գտնվում է նաեւ օդի մեջ, որը շնչում ենք յուրաքանչյուրս: Դա լուրջ պրոբլեմ է, որից միայն 20-25 տոկոսն է բժշկական պրոբլեմ, մնացած 75 տոկոսը սոցիալական եւ էկոլոգիական պրոբլեմներ են եւ այդ է պատճառը, որ առողջապահության նախարար Հ. Նիկողոսյանը դիմել էր նախկին վարչապետ Ա. Դարբինյանին, որի հրամանով էլ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որտեղ ընդգրկվել են տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներ: Մայիսի վերջին կայացել է անդրանիկ նիստը, որը շոշափել է նաեւ առեւտրի հետ կապված հարցեր: Չի բացառվում, որ փողոցային առեւտրով զբաղվողները հանդիսանան վարակի աղբյուր՝ լինելով տուբերկուլոզով հիվանդ: Նախատեսվում է, որ սննդի ոլորտում աշխատողները տարին երկու անգամ բժշկական պարտադիր սուգում անցնեն: Ներկայումս փողոցային առեւտրով զբաղվածների միայն 20 տոկոսն ունի սանիտարական սուգման գրքույկ:

Եթե 2-3 շաբաթ հազում են, զգացվում է թուլություն, ջերմության բարձրացում եւ քրտնարտադրություն, ապա անհապաղ պետք է դիմել բժշկի: Ըստ վերջին ցուցանիշների՝ ազգաբնակչության 10-ից 1-ի մոտ հայտնաբերվում է տուբերկուլոզ: Պետությունների մեջ են մտած տուբերկուլոզի ի բոլոր ձեւերի բուժումը: Այն անվճար է, սակայն դրանց մեջ չեն մտել այդ հիվանդությամբ կասկածյալների սուգումը, ինչը լուրջ խոչընդոտ է հանդիսանում հիվանդության կանխման գործում: Ինչպես պարզաբանեց հանրապետական տուբերկուլոզային դիսպանսերի գլխավոր բժիշկ Ռուդոլֆ Հովսեփյանը, հանրապետության միակ հիվանդանոցը գտնվում է աղետալի վիճակում, չկան առաջին անհրաժեշտության ախտահանիչ ու լվացման պարագաներ: Աբովյանի հիվանդանոցից կեղտաջրերը թափվում են ընդհանուր կոյուղու ցանց: Անհրաժեշտ է 320 մլն դրամ՝ վարակազերծող սարքեր ձեռք բերելու համար, որը նախատեսված չէ բյուջեով: Հիվանդանոցը չունի ջուր, մի քանի տարաներով հավաքվող ջրով հնարավոր չէ պահպանել սանիտարական նորմերը: Հիվանդանոցը խոհանոցում չունի անգամ աքոռ, սեղան, սպասք, էլ չեմ ասում սառնարան, լողարան, իսկ մահճակալները 25-30 տարվա վաղեմություն ունեն, մինչդեռ հիվանդը 8 ամիս պարտադիր պետք է գտնվի հիվանդանոցում՝ հսկողության տակ: Հատկապես մեծ է բանտերում տուբերկուլոզով տառապող հիվանդների թվերը: Ավելի վատթար վիճակում էր հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքը, ուր վիրահատարանի պատերից ամեն

ռոպե կարող էր պոկվել ծեփը, բժիշկը հագուստները փոխելու կամ լվացվելու հնարավորություն չունի: Սենյակներում 6-10, կամ 12 մահճակալ է տեղադրված, իսկ գործիքները քառասուն տարի ժամանակաշրջանից էին, որոնք ձեռքիդ մեջ կոտրվում էին, էլ չեմ ասում ռենտգեն կաբինետի սարքավորումների մասին: Թեպետ պետբյուջեից 1999 թ. հատկացվելու էր 350 մլն դրամ՝ ամսական՝ 17 մլն դրամ, սակայն ստացվել է միայն 6 մլն դրամ: Այսօրվա դրությամբ տուբդիսպ. հիվանդանոցն էներգետիկներին պարտք է 3,5 մլն, ջրմուղ կոյուղուն՝ 181 հազար դրամ, դեղորայքի դիմաց պարտք են 4,5 մլն դրամ տարբեր ֆիրմաների, սննդի համար՝ 3 մլն դրամ: Ներկայումս այնտեղ աշխատում են մոտ 500 մարդ: Աշխատավարձի չափը հասնում է 18-48.000 դրամի: Բյուջեով նախատեսված գումարները չեն տրվում, եւ հիվանդանոցը հայտնվել է ծայրաստիճան վտանգավոր պայմաններում: Մեկ հիվանդի համար նախատեսված ծախսը բուժման ողջ ընթացքում կազմում է 399 հազար դրամ:

Ներկայումս հիվանդանոցում բուժում են ստանում 500-ից ավելի առանցքային հիվանդներ, դրանց թվում նաեւ երեխաներ ու զինվորական զորամասերից ուղարկված զինվորներ ու զորակոչիկներ: Իսկ թե ինչպե՞ս է կատարվում նրանց բուժումը հնարավորություն է տալիս որակյալ բուժում ստանալ նախկին 1-1,5 տարվա փոխարեն 6-8 ամսվա ընթացքում: Վերջերս Հոլանդիայում կայացած կոնֆերանսում Հայաստանի ցուցանիշերն ավելի ցածր են եղել: Այսօր Հայաստանում 100 հազար ազգաբնակչին ընկնում է 37 հիվանդ: Մեզ համար սա բարձր ցուցանիշ է: Ռուսաստանում այդ ցուցանիշը 80-ի է հավասար, Վրաստանում՝ 100, Ադրբեջանում՝ 49: Հայաստանը ընդգրկվել է ԲՕԲ-ի ծրագրում, որի շնորհիվ ստանում է անվճար դեղորայք՝ ողջ բուժման կուրսի համար: Մահացության տոկոսն այս տարի նվազել է, իսկ հիվանդության աճը դեռ զգացվում է: Երեխաների մոտ հիվանդության տեսակարար կշիռը կազմում է 10-11 %, որը շատ բարձր ցուցանիշ է: Իսկ դիսպանսեր բաժանմունքի վարիչ Լենո Աբգարյանը փաստեց, որ 98 թ. 1495 առաջնակիր հիվանդ է գրանցվել, 97-ին՝ 1047 հիվանդ, իսկ հունիսի 1-ի դրությամբ 4652 հիվանդ կա հայտնաբերված, որը ածի միտում ունի՝ կախված ախտորոշիչ կարեւոր դեղամիջոցի՝ տուբերկուլինի բացակայության հետ: Որքան ուշանա այդ դեղորայքի ներմուծումը եւ ֆինանսավորումը Աբովյանի տուբդիսպանսեր հիվանդանոցին, այնքան դժվար ու անհնարին կլինի կանխել ու բուժել հիվանդությունը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՐՅԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսի հուղարկավորությունը

Սկիզբը էջ 1

Այստեղ էին Ափյուռոի թեմերից, այլ եկեղեցիներից Հայաստան ժամանած հոգեւորականների եւ աշխարհականների պատվիրակություններ, այդ թվում՝ Ռուս ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը՝ մետրոպոլիտ Պիտիրիմի գլխավորությամբ, Վրաց ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը՝ կաթողիկոս-պատրիարք Իլիա 2-րդի գլխավորությամբ, Ղոլսի ուղղափառ եկեղեցուց՝ մետրոպոլիտ Յոհաննեսը եւ Ամբա Բիշոյը, Կ. Պոլսի տիեզերական պատրիարքությունից՝ մետրոպոլիտ Գենադիոս Լիմուրիսը, Ասորի ուղղափառ եկեղեցուց Հալեպի մետրոպոլիտ Իբրահիմը, Հալեպի շեյխ Ալ Շամը, Վատիկանից՝ կարդինալ Կասիդին, Քենթբերիի արքեպիսկոպոսությունից Բիսինգսթոքի եպիսկոպոս դոկտոր Տեֆրի Ռոուելը:

Առավոտյան ժամը 10-ն է: Տխրալուր զողանջում են Մայր տաճարի զանգերը: Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսին վերջին հրաժեշտը տալու համար այստեղ են Վեհափառ Հայրապետի հուղարկավորության պետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը, Վրաստանի Ազգային ժողովի նախագահ Զուրաբ Ժվանիան, ՀՀ Ազգային ժողովի եւ կառավարության անդամներ, ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը, սփյուռքահայ ճանաչված բարեարներ, տարբեր երկրների ներկայացուցիչներ, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Չինաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, այլ երկրների դեսպաններ:

Հուղարկավորների շարքերում են նաեւ ՀՀ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ազգային ժողովի նախկին նախագահ Բաբկեն Արարքցյանը, նախկին նախարարներ եւ Ազգային ժողովի պատգամավորներ:

Վեհափառ Հայրապետի դագաղի մոտ հերթափոխում են սաղմոսներ եւ Ամենայն ընթերցող եկեղեցականները, ըստ կարգի՝ բոլորը:

Թաղման կարգը կատարելու համար նախ տրվեց սուրբ Պատարագ, որը մատուցեց Ամենայն հայոց կաթողիկոսական նորընտիր տեղապահ Ներսես արք. Պոզապալյանը: Ըստ թաղման կարգի, որը արձանագրված է ծիսարանում կամ «Մատեան» գրքում, թաղումը, մանավանդ եկեղեցականների, կաթողիկոսի, տեղի է ունենում մի քանի հանգրվաններով, որոնք նաեւ խորհրդանշում են հանգուցյալի հոգու փոխադրությունը դեպի երկնային օթեւան, իսկ ապա նրա մարմնին հրաժեշտ տալը եւ հողին հանձնելը:

Պատարագի սկզբին, մինչեւ ողջույնի պահը, գավթից Վեհափառի մարմինը տեղափոխվեց դասի մեջ, ապա վեր բարձրացվեց բեմ (եկեղեցու բեմը խորհրդանշում է երկինքը), որտեղ սուրբ մյուռոնով օծվեցին նրա ճակատը եւ աջ ձեռքը: Օծումը կատարեցին Մեծի տանն Արամ Ա կաթողիկոսը եւ կաթողիկոսական տեղապահ Ներսես արք. Պոզապալյանը:

Այնուհետեւ ընթերցվածների եւ շարականների երգեցողությամբ ամբողջ եկեղեցական դասը, հավատացյալները աջհամբույրով հրաժեշտ տվեցին իրենց Հայրապետին:

Պատարագի ավարտին կարդացվեց քարոզ: Խորանից դամբանական խոսքերով հանդես եկան կաթողիկոսական տեղապահ Ներսես արքեպիսկոպոսը, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը, Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը եւ Կ. Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանը:

Այնուհետեւ շարականների երգեցողությամբ ու սաղմոսների ընթերցմամբ մարմինը նորից հանգրվաններով դուրս բերվեց տաճարից. զանգակատան առջեւի փոքրիկ հրապարակում չորս ավետարաններից հատվածներ ընթերցվեցին հանգուցյալի մոտ, եւ ապա թաղման թափորը առաջացավ դեպի այն վայրը, որտեղ արդեն պատրաստ էր գերեզմանափոսը, որտեղ պիտի զետեղվեր Հայոց Հայրապետի մարմինը:

Դամբանական խոսք ասացին Վրաց եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Իլիա երկրորդը եւ հուղարկավորության պետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Հանդիսավոր եւ տխուր մթնոլորտում Հայոց Հայրապետի մարմինը հանձնվում է հողին Մայր տաճարի բակում, երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի գերեզմանի հարեւանությամբ:

Վեհափառի ծննդավայր Քեսաղում

Երջանկահիշատակ Հայրապետի ծննդավայրից՝ Սիրիայի հայաբնակ Քեսաղ գյուղաքաղաքից մեր թղթակից Գեւորգ Յազըճյանը երեկոյան հեռախոսով հաղորդեց, որ Վեհափառի համագյուղացիները յուրօրինակ ձեւով են մասնակցել ս. էջմիածնում տեղի ունեցած հուղարկավորությանը: Արբանյակային կապով միանալով Հայաստանի ազգային հեռուստատեսությանը, ժողովուրդը հենց եկեղեցում տեղադրված հեռուստացույցի միջոցով հետեւել է արարողություններին, մինչ տեղի հոգեւորականները հոգեհանգստյան պատարագ են կատարել: Թաղման պահին հնչել են եկեղեցու զանգերը, որոնք ղողանջել են նաեւ գյուղի հայ կաթոլիկ եւ հայ ավետարանական եկեղեցիներում:

ՍԵՄԻՆԱՐ

Քաղաքացիների գրանցման համակարգը՝ բարեփոխման շեմին

Երեկ «Արմենիա-2» հյուրանոցի սրահում մեկնարկեց ՀՀ կառավարության եւ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) միջեւ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակում իրականացվող ծրագրին նվիրված երկօրյա սեմինարը: Հուշագիրը նախատեսում է Հայաստանում մշտական բնակություն ունեցող քաղաքացիների գրանցման նոր համակարգի ստեղծմանն ուղղված միջոցառումների ծրագիր՝ խորհրդային օրենսդրությունից ժառանգություն մնացած ամենաանհեթեթ սահմանափակումներից մեկի՝ մշտական բնակիչների ազատ տեղաշարժի եւ բնակության վայր ընտրելու իրավունքը կաշկանդող գրանցման համակարգը միջազգայնորեն ընդունված հայեցակարգային եւ օրենսդրական դրույթներին համապատասխանեցնելու: Գործող համակարգում առ այսօր իրականացված «կոսմետիկ» փոփոխությունները դեռեւս հեռու են ՀՀ քաղաքացու անձնական կյանքի իրավունքն ապահովելուց եւ այս հարցում (ինչպես բազմաթիվ այլ խնդիրներում) ՀՀ օրենսդիրներին ուղղորդելու առաքելություն են ստանձնել միջազգային կազմակերպությունները, մասնավորապես Եվրախորհուրդը, որը պատրաստ է աջակցել ու մեզ միջազգային չափանիշների, այդ թվում մարդու իրավունքների մասին եվրոպական համաձայնագրի դրույթներին համահունչ գրանցման օրենքի հայեցակարգային եւ իրավական հիմունքների մշակման գործում եւ իր դիտողությունները ներկայացնելու քաղաքացու անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ, եւ ԱԱԿՓՀԳՀ-ը, որը կենսնաբանի հաստատված կարգված տեղահանվածների գրանցման հայեցակարգը:

Ծրագիրը, բացի գրանցման օրենքին աջակցելուց, տեղեկատվական արշավ կծավալի հայ հասարակությանը գրանցման նոր կարգին, ինչ ու նորի տարբերություններին իրազեկելու նպատակով. կհրատարակվեն եւ կտարածվեն տեղեկատվական գրքույկներ, գրանցման նոր օրենքի առդրումավոր կիրառման եւ բնակության իրազեկության բարձրացման նկատառումով օրենքի դրույթների շուրջ աշխատանքային հանդիպում կկազմակերպվի իրավասու մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների եւ լրագրողների համար:

Սեմինարի մասնակիցները՝ գրանցման համակարգի բնագավառի փորձագետներ, ՀՀ կառավարության, ՆԳ, ԿԸՀ աշխատակիցներ, իրավապաշտպան եւ այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, երեկ լսեցին Դան Քրիստիանսենի զեկուցումը՝ ԵԱՀԿ տարածաշրջանում գործող գրանցման համակարգերի տեսական եւ գործնական դրույթների վերաբերյալ: Նիդեռլանդների փորձը ներկայացրեց Լուկաս Մուստերսը, ԱՊՀ երկրներում խորհրդային ժամանակաշրջանի գրանցման համակարգի վերացման եւ նոր հասցառման համակարգերի ստեղծման ոլորտում առկա զարգացումները՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ներկայացուցիչ Վլադիմիր Շկոլնիկովը:

Այսօր ինքնարկման առարկա կդառնան Հայաստանում գրանցման հետ կապված, մասնավորապես Աժ 1999 թ. ընտրությունների ընթացքում ի հայտ եկած (ընտրացուցակային) խնդիրները եւ գրանցման համակարգի բարելավման հնարավոր միջոցառումները:

Լ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Հեռ. 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Հանձնարարատուական
ծառայութիւն / 562941
Apple Macintosh
հանձնարարատուական ստուգումը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ՈՒՇԱԳԻՐ

Պաղպաղակի տուկայում անընդհատ նոր անուններ ու մրցակցություն

Ինչքան շոգը «նեղում է», այնքան պաղպաղակի բիզնեսը՝ բարգավաճում

Վերջին տարիներին հայկական տուկայից գրեթե իսպառ դուրս մղվեցին ներկրվող պաղպաղակները, քանի որ Հայաստանում սկսվեց տեղական պաղպաղակի արտադրություն, որը, թերևս, դարձել է մեր արդյունաբերության հասուկենս զարգացող ոլորտներից մեկը: Ի տարբերություն, ասենք, մեքենաշինության, պաղպաղակի արտադրություն կազմակերպելը շատ ավելի հեշտ է, եթե ունես ներդրումների եւ տեխնոլոգիաների ձեռքբերման ֆինանսներ: Մնում է միայն որակի ապահովումն ու գնային ճիշտ քաղաքականությունը: Մրցակցությունն այս ոլորտում ամենատեսանելին է: Այսօր արդեն Հայաստանում կան ամենաքիչը 5 պաղպաղակի արտադրության գործարաններ, որոնք մի քանի տարվա ընթացքում իրենց տեսակներին հաստատեցին մի քանի տասնյակի, արտադրելով միջազգային չափանիշներին ծգտող որակով ու փաթեթավորմամբ արտադրանք: Ոլորտն ունի մի կարեւոր առանձնահատկություն՝ պաղպաղակի արտադրությունը սեզոնային է եւ ամբողջովին կախված եղանակի «քմահաճույքներից», որքան շոգը նեղում է, այնքան՝ պաղպաղակի բիզնեսը՝ զարգանում: Այդ իմաստով, թերեւս, այս տարի սեզոնի սկիզբն այնքան էլ ոգեւորիչ չէր, քանի որ հունիսը սկսվեց անձրեւներով, սակայն եղանակը կարծես թե տաքանում է, դրա հետ մեկտեղ՝ պաղպաղակի իրացումը: Այսօր Երեւանի մայթերին յուրաքանչյուր 5-10 մետրի վրա պաղպաղակի մի սառնարան կա, եւ վաճառողներն էլ կարծես թե չեն դժգոհում գնորդների պակասից:

Գերեղաչակը կաթով արտադրությունն է

Պաղպաղակի արտադրության ոլորտի առանձնահատկություններից մեկը նաեւ այն է, որ կենտրոնացված չէ միայն Երեւանում: Այսօր արդեն կարելի է արձանագրել, որ վերոհիշյալ հնգյակի մեջ հայաստանյան գնորդը ճանաչում է Աշտարակի եւ Արմավիրի կաթի գործարանների պաղպաղակները, որոնց պաղպաղակի սառնարանները տարածված են ոչ միայն համապատասխան մարզերում, այլեւ ողջ հանրապետության տարածքում: Մասնավորապես, Արմավիրի կաթի գործարանը ներկայումս օրական արտադրում է մոտ 20 հազ. պաղպաղակ՝ «Պինգվին» ընդհանուր «խորագրով», որի մեջ մտնում է 15 անուն տեսակի: «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ նախագահ Ազատ Հարությունյանը տեղեկացրեց, որ այսօր իրենց գերխնդիրն է անցնել միմիայն կովի կաթով պաղպաղակների արտադրության: Տեղեկացնենք, որ այսօր վերոհիշյալ գործարաններից միայն «Թամարան» եւ վերջերս նաեւ «Աշտարակ-կաթը» որոնք քանակությամբ կաթ են օգտագործում որպես հումք: Շուկայում առկա պաղպաղակների գերակշիռ մասը պատրաստվում է կաթի փոշով: Մասնավորապես, «Պինգվինը» որպես հումք օգտագործում է Ռուսաստանից ներկրված կաթի փոշին: Ըստ ԲԲԸ նախագահի, սակայն, հենց իրենց՝ արտադրողների համար շատ ավելի ձեռնտու է իսկական կաթի օգտագործմամբ պաղպաղակ արտադրելը: Սակայն կա մի կարեւոր գերխնդիր. նույն՝ Արմավիրի մարզում արտադրվում է որոշակի քանակությամբ կաթ, սակայն գործարան տեղափոխելը եւ համապատասխան պայմաններում պահելը, լիտր առ լիտր իրացումը կազմակերպելը մեծ հարց է: Հետեւաբար, գործարանի ղեկավարությունը պետք է լինի սեփական ֆերմա ունենալը, որը հնարավորություն կտա տեղում միանգամից մեծ քանակությամբ կաթ մթերել:

Անասնաբուծական տնտեսությունը հնարավորություն կտա կազմակերպել նաեւ բարձրորակ պանրի արտադրություն, այսինքն վերականգնել նախկին Արմավիրի կաթի գործարանում արտադրվող «Շանախ» տեսակի պանրի արտադրությունը: Այսօրվա դրությամբ գործարանը չի օգտագործում նաեւ մրգային խյուսեր, ինչին այս տարի անցել է, օրինակ, «Թամարան», եւ երկրորդ գերխնդիրը լինելու է մրգերով հարուստ Արմավիրի մարզից տարբեր մրգատեսակներով պաղպաղակների արտադրությունը: Այն հարցին, թե կարելի՞ է եկամտաբեր անվանել պաղպաղակի արտադրությունը, որն Հարությունյանը անկեղծ պատասխանեց՝ այո, սակայն խիստ մրցակցության պայմաններում պահանջվում են անընդհատ ներդրումներ եւ տուկայի հետ հետեւողական աշխատանք: Այսպես, 97 թվականին գործարանը, մեկ տարի առաջ սեփականաշնորհվելուց հետո, արտադրում էր ընդամենը երեք տեսակի պաղպաղակ, այդ թվում խորհրդային տարիներին հայտնի ավանդական «էսկիմո», եւ ուներ ընդամենը 50 սառնարան: Այսօր ամբողջ հանրապետության տարածքում կան «Պինգվին» պաղպաղակի 500 սառնարաններ, ինչը նշանակում է լրացուցիչ 500 աշխատատեղեր, իսկ բուն արտադրության մեջ աշխատողների թիվը հասնում է 80-ի: Ընդհանրապես, ըստ պրն Հարությունյանի տուկայի մրցակցությանը դիմանալու համար անհրաժեշտ է արտադրության մեջ, ընդհանրապես՝ բիզնեսում, անընդհատ «իմպրովիզներ» անել, այլապես մի օր տուկան կուլ կտա քեզ:

Մի խոսքով, տուկան մնում է տուկա՝ իր օրենքներով ու անակնկալներով:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

ԼՈՌԻ

Առաջնահերթը շինարարությունն է

Հուլիսի 7-ի ասուլիսում Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը խոսեց Հայաստանում նոր ծեւավորված կառավարության ծրագրի մասին, որի իրականացման համար գործադիր իշխանության բոլոր օղակները կոնկրետ միջոցներ են ձեռնարկում: Հենրիկ Քոչինյանը նշեց, որ լարվածություն կա ֆինանսական ոլորտում: Կարիտաս շինարարության ոլորտում տարբեր կազմակերպություններին պարտքերը հասնում են 600 մլն դրամի, իսկ մարզի 4 կառույցներում շինարարությունն իրականացնողներին նույնիսկ կանխավճար չի տրվել: Չնայած դրան, հույս կա, որ մինչեւ տարեվերջ շինարարության 1999 թ. ծրագիրը կկատարվի: ՀՀ կառավարության, ֆինանսների նախարարության հետ մարզպետի բանակցությունները հուսադրող են, եւ մարզում այս տարի շինարարության ծավալների կրճատում չի լինի: Ավելին, այս ամսում կհայտարարվի Վանաձորի թիվ 1 դպրոցի շինարարության մրցույթ, որից հետո կսկսվի առաջին մասնաշենքի կառուցումը: Այդ նպատակով նախատեսված է շուրջ 450 հազար դոլար: Իսկ սոցներդրումների հիմնադրամն արդեն ավարտել է Վանաձորի թիվ 22 դպրոցի շինարարության մրցույթը: Այդ երկու կառույցների գումարները չեն մտնում Լոռու մարզի համար նախատեսված 3 մլրդ 200 մլն դրամի մեջ: Շուրջ 120 հազար դոլարի աշխատանք կտրվի Ճոճկան, Օձուն եւ Ջրաբեռ գյուղերում ամբուլատորիաների շինարարության համար, որից 15 հազարը կտրամադրվի բժշկական սարքավորումներին եւ դեղորայքին: Եկող տարի նման ամբուլատորիաներ կկառուցվեն մարզի եւս 4 գյուղերում: Ընդհանրապես, շինարարության ծավալները Լոռու մարզում անցյալ տարվա համեմատ այս տարի ավելացել են շուրջ 2 անգամ: Մարզպետն անդրադարձավ կրթության եւ առողջապահության համակարգին ունեցած պարտքերի վճարման, հարկային եկամուտների հավաքագրման հիմնահարցերին, քաղաքաշինությանը, դպրոցաշինությանը, ճանապարհաշինությանը: Հենրիկ Քոչինյանը նշեց, որ արդեն ստեղծվել է հանձնախումբ Վանաձոր-Ալավերդի հատվածի 16 կմ առաջնակարգ ճանապարհը, եւ այդ ոլորտում այս տարի մարզում կիրականացվի 2 մլրդ դրամի աշխատանք: Նա կարեւորեց նաեւ ոռոգման համակարգի աշխատանքները, նշելով, որ բազմաթիվ համայնքներ արդեն ապահովված են ոռոգման ջրով: Այս տարի այդ նպատակով արդեն իրականացվել է 700 հազար դոլարի աշխատանք, եւ 2000 թ. մարզում ոռոգման խնդիրը վերջնական լուծում կստանա: Մարզպետն անդրադարձավ նաեւ անհատական բնակարանաշինության, ջրամատակարարման, գազամատակարարման հիմնահարցերին, որոնց լուծման համար եւս մարզում լուրջ քայլեր են արվում: Անդրադառնալով ընդունելության ֆնությունններին, մարզպետը նշեց, որ ինքն անձամբ ամենաակտիվ մասնակցությունն է ունենալու, ստանձնելու է պատասխանատվությունը՝ պահպանելով ամենայն խստություն: Նա ասաց, որ օբյեկտիվությունն ապահովելու գործում ակնկալում է լրագրողների աջակցությունը:

ՄԱՐՏԻՆ ՄԵԿՈՅԱՆ
Վանաձոր

Էներգետիկայի համակարգում հաստիքների կրճատումներ են նախատեսվում

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒԼԻՍ. ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. Հուլիսի 8-ին Երեւանի ՀՀ էներգետիկայի նախարարության մուտքի մոտ խմբված նախկին Արագածի շրջանից մայրաքաղաք ժամանած «էլեկտրացանց» պետական փակ բաժնետիրական ընկերության Արագածի մասնաճյուղի ներկայացուցիչները պահանջում էին վերականգնել իրենց կորցրած աշխատատեղերը:

Ինչպես հավաքվածներից տեղեկացանք, մասնաճյուղը լուծարվել էր ՀՀ էներգետիկայի նախարարի հուլիսի 2-ի հրամանով: Շեռնարկության աշխատակիցներին լուծարման մասին նախապես չէին զգուշացրել, եւ աշխատանքից զրկվելու մասին վերջիններս տեղեկացել էին մեկ օր առաջ: Բողոքարարների հավաստմամբ, մասնաճյուղը շրջանում գործող միակ ձեռնարկությունն էր: Չնայած հաստիքային աշխատատեղերը 65-ն էին, իրականում աշխատողների թիվը 80 էր: մարդիկ աշխատում էին 1/3 հաստիքով, որպեսզի հնարավորին չափ շատ մասնագետներ աշխատանք ունենան: Մասնաճյուղին տեղամասի կարգավիճակ հաստատելու հետեւանքով մի քանի տասնյակ ընտանիքներ զրկվում են միակ եկամուտից:

Էներգետիկայի նախարարության լրատվական ծառայությունից տեղեկացանք, որ ցուցարարների հետ նախարարի հանդիպման արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն, ըստ որի մասնաճյուղը չի լուծարվելու, սակայն վերածվելու է տեղական հենակետի, իսկ աշխատատեղերը կրճատվելու են 10-20%-ով, այն էլ ոչ շահագործող անձնակազմի հաշվին: Միեւնույն ժամանակ նախարարության ներկայացուցիչները նշեցին, որ համակարգի անձնակազմի ուռճացվածությունը նպաստում է սակագների բարձրացմանը: Նշվեց, որ կրճատումներ են նախատեսվում ողջ համակարգում, ներառյալ նախարարության հաստիքները, որոնք ներկայումս 93-ն են:

«Թույլ տվեք կոնկրետ քվեր չասել, բայց ճեղքվածքները մեծ են»

Սկիզբը էջ 1

Ինչո՞ւ են ուռանում SAC-2-ը եւ ESAF-ը

Դեռեւս հունիս ամսվա սկզբին, համաձայն պայմանավորվածությունների, ՀՀ կառավարությունը պետք է ստանար SAC վարկի երկրորդ չափաբաժինը՝ 25 մլն դոլար, ինչպես նաեւ ESAF-ը՝ շուրջ 28 մլն դոլար (ESAF վարկը հատկացվում է SDR-ով: Ընդհանուր գումարը 109,35 մլն SDR է, որից Հայաստանը ստացել է 88,4-ը): Ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանն այս երկու վարկերի ուռճացումը պատճառաբանեց ֆինանսական ճեղքվածքներով. «SAC-2-ը ՀԲ-ի կողմից ուռճանում է, որովհետեւ որոշակի համաձայնություններ հարց կա ՄԱՀ-ի հետ՝ ESAF-ի առնչությամբ, այս երկու ծրագրերը փոխկապակցված են: Արդեն երեւանում է ՄԱՀ-ի պատվիրակությունը, եւ մենք բանակցում ենք: Հաջող ավարտի դեպքում, հուսով եմ, որ հուլիսի վերջին եւ օգոստոսի սկզբին կկարողանանք ստանալ SAC-ի երկրորդ չափաբաժինը, իսկ մյուս չափաբաժինը՝ դեկտեմբերի վերջին: Սա է կարեւորը»:

Հուլիսի 7-ին ՄԱՀ-ի առաքելությունը Լուիս Վալդեմիեսոյի գլխավորությամբ հանդիպեց վարչապետ Վազգեն Սարգսյանին: Բանակցություններին մասնակցում են ֆինանսների, էկոնոմիկայի, պետական եկամուտների նախարարները եւ Կենտրոնական բանկի նախագահը: Պաշտոնական աղբյուրներն առայժմ լռում են բանակցությունների ընթացքի վերաբերյալ: Բայց իրազեկ աղբյուրներից «Ազգին» հայտնի դարձավ, որ այդ բանակցությունները բավականաչափ բեժ են, եւ եթե ՀԲ-ի պարագայում պրն Վուլֆենսոնը շատ ավելի բարյացակամ էր բյուջետային խոր ճեղքվածքներ ունեցող Հայաստանի հանդեպ, ապա ՄԱՀ-ը՝ ի դեմս պրն Վալդեմիեսոյի, շատ ավելի անհողդողդ է իր պահանջներում: Այդ պահանջների թվում է նաեւ սակագների բարձրացումը, ինչը կարող է լուրջ հարված լինել նորանշանակ կառավարության հասարակական-քաղաքական վարկանիշին:

Որքա՞ն է իրականում բյուջեի դեֆիցիտը

«Ազգը» դեռեւս կառավարության ձեւավորման շրջանում փաստարկել է բյուջեի սեկվեստրի անհրաժեշտությունը, սակայն նախկին վարչապետ եւ այսօր էկոնոմիկայի նախարար Արմեն Դարբինյանը փորձում էր ամեն կերպ հուսադրել, թե սեկվեստր, իմա՝ ծախսերի կրճատում անհրաժեշտ չի լինի: Այսօր ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը պատճառաբանում է դրա անհրաժեշտությունը: Ենթադրելի է, որ ՄԱՀ-ի պահանջների թվում եւս կա այս քայլը: Ֆինանսների նախարարը հայտնեց, որ ծյուղային ոլորտներում՝ հատկապես էներգետիկայի, վարկային ծրագրերի իրագործման լուրջ թերացումներ կան, որ մասնանշում են թ՛ ՄԱՀ-ը, թ՛ ՀԲ-ն, բացի այդ, չափազանց մեծ է էներգետիկ համակարգի պարտքերի գումարը: Ընդհանուր՝ միայն «Նաիրիտը» 20 մլրդ դրամի պարտք ունի էներգետիկներին, 4 մլրդ դրամի պարտք էներգետիկ համակարգին ունեն անհատ սպառողները եւ մի շարք այլ ձեռնարկություններ: Ջեռուցման համակարգի պարտքը կազմում է 1 մլրդ դրամից ավելի: Երեւանի ջրմուղի ղեկավար Հովհաննես Գրիգորյանն «Ազգին» հայտնեց, որ բնակչությունը ջրմուղին պարտք է 4 մլրդ դրամ, սակայն Ամ-ին ներկայացված ՀՀ կառավարության գործունեության ծրագրում նշված է, թե խմելու ջրի համակարգի պարտքը 1 մլրդ դրամ է: Իսկությունը մեզ համար դժվար է պարզել: Ոռոգման ջրի համակարգում՝ շուրջ 2 մլրդ:

Եթե բնակչությունը եւ ձեռնարկությունները պարտք են բյուջեին, ապա, բնական է, որ բյուջեն էլ պետք է պարտք լինի իր աշխատողներին եւ բնակչությանը: Լեւոն Բարխուդարյանն ընդունեց, որ բյուջեն ունի եւ նպաստների, եւ բյուջետային հիմնարկների աշխատավարձերի չվճարումների որոշակի բեռ: Հիշենք, որ եթե պատշաճ տվյալներով ՀՀ պետբյուջեի դեֆիցիտը մոտենում է 22 մլրդ դրամի, ապա, ըստ բանկային եւ կառավարական այլ աղբյուրների, որոնք չեն ցանկանում բացահայտվել, մեր դեֆիցիտը շատ ավելին է՝ շուրջ 60 մլրդ դրամ, այն պարագայում, երբ 98 թ. պետբյուջեի մասին օրենքով դեֆիցիտը 56,8 մլրդ դրամից ավելին չպետք է լիներ: Ակնհայտ է, որ բյուջետային դեֆիցիտի նման ծավալները կարող են վերջնականապես կործանել միջազգային ֆինանսական կազմակերպությունների դիրքորոշումը Հայաստանի հանդեպ, այնինչ Հայաստանին կենսականորեն անհրաժեշտ է 50 մլն դոլարից ավելի վարկային ներարկումներ: Այստեղից էլ դեֆիցիտի վերաբերյալ տարընթերցումներ:

Հարկատուներից կանխավճարներ հավաքելու մարտավարությունը Հայաստանում շարունակվում է: «Ազգն» արդեն անդրադարձել է այդ փաստերին: Եթե փոքր ու միջին ձեռնարկատերերից հարկային տեսուչները պահանջում են 30-100 հազար դրամի կանխավճար, ապա խոշոր տնտեսավարողներից՝ մինչեւ 10 մլն դրամի: Հիշեցնենք, որ կառավարության վերջին նիստում շնորհակալություն են հայտնել այն նախարարներին, որոնք կարողացել էին ապահովել իրենց հարկային ամսական ցուցանիշները: Արդյունաբերող գործարարների միության նախագահ Արամ Վարդանյանը վերջերս Լեւոն Բարխուդարյանին ակնարկեց, թե պետք է շնորհակալություն հայտնել այն հարկատուներին, որոնք ընդառաջել են այդ նախարարներին՝ իբրեւ բարի կամքի դրսեւորում: Բարի կամքի նշան էլ կարելի է համարել այն հանգամանքը, որ կանխավճար մուծող տնտեսավարողները բեռ դիմում են ՁԼՄ-ներին, բայց չեն ցանկանում հրապարակել իրենց անունը: Կանխավճարները, սակայն, ունեն սահման, այսինքն՝ ամեն ինչ հանգում է միջազգային կազմակերպություններից սպասվող վարկերին: Կկարողանա՞ արդյոք Վազգեն Սարգսյանի կառավարությունը ստանալ ՄԱՀ-ի բարի կամքը: ՀԲ-ինն ուղղվում է:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ազգային

ԴՐՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Անկում

Հայաստանի նորագույն պատմության յուրաքանչյուր փուլում կարգախոսի հանգույն արժեքային համակարգ է ներդրվել այս կամ այն հասկացությունը, իսկ ամենահաճախադեպ եւ անվերջ շրջանառության մեջ գտնվող ձեւակերպումն այս էր «պետություն ենք կայացնում»: Տեւական ժամանակահատված, որպես երկրի քաղաքացիներ, ամենայն լրջությամբ, գիտակցված համբերությամբ էինք ընկալում այն բոլոր հնարավոր բարդություններն ու խոչընդոտները, որոնք նախանշում էին մեր պետական այրերը պետություն կայացնելու գերբարդ գործընթացում: Անկախ պետականության վերականգնման ականատեսն ու մասնակիցը լինելու բարեբախտության համար տրվող վճարը, անշուշտ, մեծ էր, բայց վստահ էինք, որ երկիրը միանգամայն է ստանալու յուրաքանչյուրիս զոհողության գնով:

Այսօր գրեթե ոչ ոք չի արծարծում «պետություն կայացնելու» բազմաչարչար արտահայտությունը: Գուցե այն պատճառով, որ գերիշխող այն համոզմունքն է, թե պետության կայացումն արդեն իսկ իրողություն է, ուստիեւ նոր կարգախոսների նորամուտի ժամանակն է «կառուցենք եւ պաշտպանենք»: Սակայն աստիճանաբար գոնե ինձ համար պարզ է դառնում, որ «կառուցելու եւ պաշտպանելու» համար արդեն ոչ միայն ցանկություն, այլեւ պետություն չկա: Հայրենիքը կա՝ որպես վիճակ, որպես մտածողություն, որպես հող, բայց այդ հողի վրա այդպես էլ պետություն չկայացավ: Գուցե մեր գենե՞ռումն է անչափ նվազել պետություն կայացնելու կենսանյութը: Կամ գուցե պետականություն կայացնելու առումով մենք անհրաժեշտ չափով ինքնակազմակերպված ա՞զգ չենք:

Տարիներ շարունակ իրականացվող քաղաքականությունը, որը փորձ էր արվում մատուցել որպես «պետության կայացման» գործընթացի հերթական հանգրվան, համահունչ չէր անկախ, ժողովրդավարական պետականության կայացման նախանշված տրամաբանությանը: Հասարակական-քաղաքական շրջանակների աչքին սկզբում տարակուսանքով, ապա եւ լուրջ կասկածներով սկսեց պարուրվել իշխանությունների ցանկությունը, կայացնելու անկախ, ժողովրդավարական այն պետությունը, որի օգտին 91-ի սեպտեմբերի 21-ին քվեարկել էր մեր հասարակությունը գրեթե միաձայն:

Աստիճանաբար «պետություն կայացնելու» կարգախոսը ամրացվեց իշխանությունների դրոշին, որը նրանք ժամանակ առ ժամանակ թափահարում էին արդարացնելու այս կամ այն ծախողումը: Այդ կարգախոսի տակ իրականացվում էր հասարակության լայն հատվածների սոցիալական կեղեքումը, առանձնանում արտոնյալների ու անձեռնմխելիների շերտը, պետության կառավարումից հեռացվում էր մասավորականության այն հատվածը, որը միշտ չէ, որ խանդավառվում էր իշխանությունների ձեռնարկումներով:

Նոր-նոր ձեւավորվող ժողովրդավարական ինստիտուտների կայացման հեռանկարը ժամանակ առ ժամանակ խիստ մշուշվում էր: Երբեմն ազատության ամենաչնչին նշույլն իսկ հարկ էր լինում նվաճել տեւական ճիգերով: Ներքաղաքական գործընթացները, որոնք եւս «պետության կայացման» շրջանի անբաժանելի օղակն էին կազմում, ծավալվում էին անտարբերության, ամենաթողության տիրող դարձող մթնոլորտում: Թերեւս հանուն ճշմարտության պիտի ասել, որ ավելի հաճախ այդ ամենն արվում էր չգիտակցված, եւ հիմնականում հետեւանք էր պետության կայացման հանդեպ անտարբերության, անլուրջ վերաբերմունքի:

Ավելի ուշ, 1995 թ. հուլիսի 5-ին Հայաստանում հստակվեց այն քաղաքական համակարգը, որի հիմքը դրվեց Սահմանադրությամբ եւ ազատ ընտրական համակարգի անարգմամբ: Դրանից հետո հասարակական, քաղաքական կյանքում կատարվող յուրաքանչյուր տեղաշարժին նախորդում կամ հաջորդում էր իշխանության միջամտությունը: Գործող քաղաքական համակարգը պահանջում էր շուտափույթ ձեռնամուխ լինել պետական կառույցների ձեւավորմանը: Ելակետը մեկն էր՝ ավելի ու ավելի նվազեցնել հասարակական, քաղաքական կառույցների, նրանց ներկայացուցիչների մասնակցությունը պետական կառավարմանը: Թերեւս քաղաքական ընդդիմությունը իր հերթին հրաժարվեց որեւէ մասնակցությունից մերժելով խաղի անընդունելի կանոնները, որոնց համար նախանշված էր մեկ ելք, մեկ լուծում՝ ջարդել Հայաստանում ազատ ընտրական համակարգը, կասեցնել ներկայացուցչական ինստիտուտների, ըստ այդմ, նաեւ հակակիշռների ձեւավորումը, իսկ պետության կայացման իրավունքը վերապահելով բացառապես իշխանություններին՝ զրկել հասարակությանն ու քաղաքական ընդդիմությանը պետական կյանքին որեւէ միջամտություն ցուցաբերելու իրավունքից: Ավելի ուշ՝ պետական կառույցներում սկսեցին արմատավորվել անպատասխանատվության, կաշառակերության եւ կոռուպցիայի երեւույթները, իսկ հասարակական վարկաբեկումը հանիրավի ներառեց նաեւ ոմանց բարի անունն ու համբավը: Թացուչորի այս խառնուրդում սկզբունքայնությունը, անկաշառությունն ու պարկեշտությունը համարվեցին դարն առած արժեքներ: Հասարակական կյանքում եւս ծայր առավ նոր արժեքների աննախադեպ այլակերպումն ու վերաստեղծումը:

Ներքաղաքական տեղաշարժերն ավելի ու ավելի բացասական գունավորում էին ստանում: Պետական համակարգը կայանում էր միայն խիստ անձնավորված կառույցներով: Ավելի ու ավելի էր ընդգծվում իշխանական եւ պետական համակարգերի սերտաճումը, որոնց նույնացումն էլ հասարակության մեջ առաջացրեց նախ արհամարհանք, ապա վախ, վերջապես վաս հողակված ատելություն, թշնամանք թե իշխանությունների, թե պետության հանդեպ: Պետական կառույցների բարոյալքումը, դրանց դասապարտելի կարծր միջամտությունը ժողովրդավարական ինստիտուտների կայացմանը, հասարակական կարծիքի հանդեպ իշխանությունների համահարանքը ստիպեց հասարակության մեծ մասին վերջնականապես վերագնահատել, վերանայել այն արժեքային համակարգը, որի օգտին քվեարկել էր 91-ի սեպտեմբերին եւ որը ծեւախեղվեց 95-ին եւ նրան հաջորդած բոլոր ընտրություններում:

Իշխանությունները ձգտում էին իրենց որդեգրած մերժելի արժեքները ներդնել հասարակական տեղաշարժերի հիմքում, ինչը հիմնականում հաջողվեց կազմակերպված ու հետեւողական աշխատանքների արդյունքում: Ըստ էության փոփոխվող իշխանավորները ժառանգականության պահպանման հարցում ցայսօր չդավաճանեցին միմյանց, եւ առաջավոր երեւույթներն այն աստիճան խորացան, որ այլեւս արգելակում են հասարակության ամենասովորական առաջընթացը: Այսօրինակ իրողությունների եւ երեւույթների արմատավորման արդյունքում պարզ է դառնում, որ Հայաստանում հասարակարգ չի ստեղծվել: Իսկ գոյություն ունեցող քաղաքական համակարգը իր ողջ անհեթեթությամբ չի կարող առնչություն ունենալ պետականության հետ: Այն, ինչ այսօր առնչվում է պետականությանը՝ սովորական խորհրդանիշներն են, որոնք ի վիճակի են ունենալ ամենապարզ միավորումները:

Սինչդեռ պետությունը կարող է գոյություն ունենալ միայն հասարակության զարգացմամբ, բնականոն հասարակարգի ստեղծմամբ: Անձնավորված, սեփական խնդիրների լուծմանը ծառայող պետական կառույցներն ի սկզբանե դատապարտեցին պետական համակարգի կայացումը Հայաստանում: Գիտակցելով, որ ստեղծված պետական, քաղաքական համակարգը չի կարող Հայաստանի ճանապարհները դուրս բերել դեպի եվրոպական քաղաքակրթություն ու արժեքներ, վերջին փորձն արվեց գոնե կայացնելու Հայաստանը իր տեսակի մեջ որպես արեւելյան երկիր հասարակական կեցությամբ, գիտակցությամբ, քաղաքական համակարգով:

Այսօրինակ իրողությունների գերիշխանության պայմաններում տնտեսական քաղաքականությունը միայն տեսականորեն կարող էր առնչվել ազատական արժեքներին, ուստիեւ յուրաքանչյուր տնտեսական բարեփոխում դատապարտվում էր ի սկզբանե, իսկ իրականացվող տնտեսական քաղաքականության հետեւանքով ամրանում էր արեւելյան տնտեսածեւը:

Հայաստանի Հանրապետության, որպես պետական կազմավորման, կայացման հետածգման հողն այն էր, որ գաղափարախոսությունը, արժեքային համակարգը, խնդիրներն ու նպատակները, որոնք մշակվել ու ներդրվել էին ՀՀՇ-ի առաջին ծրագրում, իրենց իրականացման դժվարին գործընթացում ուղղակի վերաստեղծվեցին: Սինչդեռ հասարակությունը, պետական համակարգը եթե հոչակում, բայց իրականացնում է տրամագծորեն հակառակ գաղափարներ, այդ դեպքում շեղումը նախանշված ուղուց մեծացնում է համակարգի անկման հնարավորությունը: Եվ եթե պետությունը որպես համակարգ չի կայանում, ապա չի կայանալու արժեքային եւ ոչ մի համակարգ: Հայաստանում հոչակելով ազատական, ազգային եւ ժողովրդավարական արժեքների գերակայության անհրաժեշտությունը, անվերջ փորձ էր արվում նեղացնել ազատական տնտեսական դաշտը, նվազագույնի հասցնել տնտեսական եւ քաղաքական ազատությունների չափաբաժինը, արհամարհել ազգային գաղափարախոսությունը: Եվ պատահական չէ, որ չկայացած պետական կազմավորման առկայության պայմաններում Հայաստանում առաջացան քաղաքական նոր դեմքեր, սակայն քաղաքական միտքը, որպես համակարգ, չկայացավ: Չկայացավ նաեւ նոր ազգային մշակույթը որպես համակարգ: Ուշագրավ հեռանկար էր ներկայացնում մամուլը որպես նոր ձեւավորվող համակարգ, մանավանդ այն տարիներին, երբ պետության կայացման ընթացքը միայն մասնակի շեղումներ կարող էր արձանագրել նախանշված ուղուց: Սակայն մամուլն էլ զերծ չմնաց համընդհանուր նահանջից, եւ նոր լրագրողական սերնդի, բազմանուն թերթերի առկայության պայմաններում անգամ մամուլն ու նոր լրագրությունը որպես համակարգ եւս չկայացան: Ժողովրդավարական մյուս ինստիտուտներից ազատ ընտրական համակարգը ընդհանրապես «դե ֆակտո» արգելվել է Հայաստանում, ուստիեւ պառլամենտարիզմի եւ բազմակուսակցականության մասին ավելորդ է խոսել: Սինչդեռ այս ինստիտուտների կայացումն ավելի քան պարզորոշ էր 90-ական թթ:

Այսեւայլ իրողությունների պայմաններում փորձեցին ամրացնել պետության նյութական հիմնասյուները՝ ուժային կառույցները, որոնցում բուն դրած կաշառակերության եւ կոռուպցիայի երեւույթները սասանեցին այդ կառույցների բարոյական հիմքը:

Ոգով եւ խանդավառությամբ պետություն կայացնելու ժամանակն անցել էր, ուստիեւ մնում էր հաղթեղ, հընթաց, առանց երկար-բարակ մտածելու կայացնել ինչ-որ մի պետական կազմավորում, որպեսզի կասեցվեր անկման հնարավորությունը:

Սինչդեռ Հայաստանում պետական համակարգի կայացման եւ նրա հարատեւության կենսունակությունը մեկն էր՝ ստեղծել, կայացնել, ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները, վերազտել ազգային ավանդությունները եւ ընթանալ քաղաքակիրթ աշխարհին համապատասխան: Այս արժեքների իրականացումը Հայաստանում այլընտրանք չէր կարող ունենալ, քանի որ մեր երկրի համար սա էր զարգացման ու առաջընթացի, հասարակական, ազգային ու պետական խնդիրների լուծման ճանապարհը:

Հայաստանը շեղվեց այդ նախանշված ուղուց՝ դուրս գալով մի ճանապարհ, որի ուղղությունն անհայտ է ու վտանգավոր:

99 տարի առաջ՝ 1900 թ., հայ քաղաքական մտքի փիլ հիշվող ներկայացուցիչներից մեկը՝ Ստեփան Սաղաթելյանը, ելնելով այսօրինակ իրավիճակից հստակ էր ձեւակերպել. «Պատմության ընթացքը շատ պարզ է. ուղիղ գաղափարները ազգեր են կյանքի կոչում եւ պետություններ են ստեղծում, իսկ սխալ մտքերի կիրառությունները գոյություն ունեցող ազգությունները են ջնջում եւ կազմված պետություններ են քայքայում» (Ստեփան Սաղաթելյան «Երիտասարդ Թուրքիա», Եր., 1991):

Եվ հայտնի չէ, թե վաղը նոր շեղում չի՞ արձանագրվելու մեր ճանապարհից, եւ հաջորդ քայլը մոտեցնելու՞ է, թե՞ հեռացնելու պետական համակարգի, վերջին հաշվով պետականության անկումը:

ՆԱՐԻԿ ՄԱՐՏՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Սփիւռք-Հայաստան համաժողովին նախապատրաստական հանդիպումը Փարիզի մէջ

Որպէս նախապատրաստութիւն սեպտեմբեր 22-ին Երեւանի Հայաստան-Սփիւռք համաժողովին, Ֆրանսահայ «Արդիկ 24» կոմիտէն խորհրդակցական-աշխատանքի օրուան մը հրաւիրած էր Ֆրանսահայ կազմակերպութիւնները, խմբաւորումները, որպէսզի կարելի ըլլայ առաջարկներ, տեսակէտներ բանաձեւել: Ներկայ էին գրեթէ բոլոր շրջաններէն ներկայացուցիչներ, կազմելով մօտ հարիւր հոգինոց լսարան մը: ՀԲԸՄ-ի Ֆրանսայի նախագահ դոկտ. Ե. Ադամեանի ողջոյնի խօսքէն ու «Արդիկ 24» կոմիտէի նախագահ Ա. Կեօվճեանի ներածականէն ետք որոշուեցաւ երկու աշխատանոց կազմելով համադրել տեսակէտները: Առաջինը նկատի պիտի ունենար գործընկերութեան կառոյցները, կազմակերպումը, երկրորդը՝ փոխյարաբերութիւններու շրջանակին պարունակը: Առաջինը ղեկավարեց Հայ դատի յանձնախումբի նախագահ Ա. Գրիգորեան, երկրորդը՝ ԺԻԻՍ-ի նախագահ Մ. Դէյիրմենճեան:

Երկու խումբերը անջատ վայրերու մէջ շարունակեցին խորհրդակցութիւնները. այդ ընթացքին յաճախ յայտնուեցան նոյն մտահոգութիւնները եւ մինչեւ ետք ալ տիրեց երկու աշխատանոցներու գործունէութեան մարզին շփոթը: Կեսօրին, երկուքին տեղեկաբերները՝ Գ. Գեւոնեան եւ Մ. Դէյիրմենճեան, առաջինը գրաւոր, երկրորդը՝ բերանացի, ներկայացուցին ամփոփուած արդիւնքները:

Առաջին տեղեկագիրը Սփիւռք-Հայաստան գործընկերութիւնը կ'ուզէր զետեղել առողջ զետնի մը վրայ, ուր յարգուին երկու բեւեռներուն իրաւասկութիւնները, իրաւանչիւրին գործունէութեան դաշտը: Այդ կը նշանակէր ժողովրդավար կարգերու, կաշառակերութեան դէմ պայքարի անհրաժեշտութիւնը: Որպէս միասնական նպատակ կը թուէր քաղաքական, տնտեսական, ինքնութեան, առողջապահութեան եւ այլն մարզերը, թելադրելով, որ սեպտեմբեր 22-ին Ֆրանսայի գաղութը ներկայացնելու կոչուած պատուիրակութեան մէջ ներկայացուցչական կազմակերպութիւններն դուրս մնացած անձնաւորութիւններ ալ ընդգրկուին:

Երկրորդ աշխատանոցը, շեշտելէ ետք հայութեան երկու հատուածներուն տարբերութիւնները, յարմար կը գտնէր կրթական, տնտեսական, տեղեկատուական յատուկ խորհուրդներու կազմութիւնը, փոխյարաբերութիւններու խորացումը՝ մշակութային ու այլ բնագաւառներու մէջ, արհեստագիտական զարգացումներու Հայաստան փոխադրութիւնը եւ կարեւոր կը նկատէր Հայաստանի կողմէ Սփիւռքի աւելի լաւ ճանաչում մը, իր կառոյցներով ու մասնայատկութիւններով:

Կէսօրուան ճաշի ընդմիջումէն ետք, շուրջ երկու ժամուան վիճարկումի նիստ մը տեղի ունեցաւ Տ. Շիրվանեանի նախագահութեամբ: Նիւթ եղան ներկայ լսարանին Ֆրանսայի գաղութին համար ներկայացուցչական հանգամանքը, Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններուն մէջ դաս տալ-չտալու հարցը, Եւրոպայի եւ Սփիւռքի այլ գաղութներուն հետ խորհրդակցութեան պարագան, պատուիրակութեան կազմութեան թիւը, ընտրութեան ձեւը, բիւրձեն ելն.:

Ընդհանուր այս վիճարկումին աւարտին մօտ ժամանեց Հայաստանի դեսպան է. Նալբանդեան ու որոշ բացատրութիւններ տուաւ սեպտեմբերի համաժողովին կազմակերպչական խնդիրներուն մասին: Ըսաւ, թէ կ'ենթադրուէր 6-700 հոգիի մասնակցութիւն, ինչ որ Ֆրանսահայ գաղութէն շուրջ 20 հոգինոց պատուիրակութիւն մը նախատեսել կուտար: Շեշտեց, թէ կարեւորը այնքան թիւը չէր, որքան ներկայացուելիք առաջարկները, եւ այս առումով երեւան շատ լուրջ ակնկալութիւն ունէր Ֆրանսայի գաղութէն: Ըսաւ նաեւ, թէ սեպտեմբերին հանդիպումը սկիզբ մըն էր, որուն ընթացքին եթէ կարելի ըլլար ճիշտ հարցադրումները ընել, ձեւակերպել հարկաւոր կառոյցները, ապիկա արդէն մեծ յաջողութիւն կը նշանակէր:

Կարելի՞ էր Երեւանի լրջութեան ակնկալութիւնները արդարացնող ձեռնարկ նկատել յունիս 27-ի փարիզեան հանդիպումը: Մասնակցութեան, միասնական աշխատանքի տեսակէտէ անվարան կերպով դրական է պատասխանը: Ինչ կը վերաբերի միջուկին, տակաւին կտրելիք բաւական ճամփայ կայ, յատկապէս նկատի առած՝ լոգունգայինին շարունակուող ներկայութիւնը, կրկնութիւնները, գործնականէն մեծ դիւրութեամբ հեռացող ելոյթները:

Այսուհանդերձ, մինչեւ սեպտեմբեր հիշ մը ժամանակ կայ ու բաւական մը բարիկամեցողութիւն, լրջութիւն, որպէսզի հարկաւորը կատարուի ի դերեւ չհանելու համար Ֆրանսահայ գաղութէն Երեւանի ակնկալութիւնները:

ԱՐՓԻ ՅՈՒՍՈՅԵԱՆ

«Յառաջ»

ԱԶԳ

Միջազգային

Չեռնոմիրդին, Պրիմակով, Լուժկով, Ստեպաշին... ո՞վ է հաջորդը

«Նոյն գյուրիներ գայսունգը» (Շվեյցարիա) նախագահական աթոռի համար պայքարի մասին

Ադամագահ Ելցինը հոգեպես եւ ֆիզիկապես իրենից, թերեւս, ավերակ է ներկայացնում, սակայն նա մշտապես հասկացնում է, որ ժամկետից շուտ պաշտոնաթողության մասին չի մտածում: Մոտավորապես մեկ տարի հետո լրանում է նրա նախագահական երկրորդ ժամկետը, եւ չնայած հակառակը պնդող լուրերին, հավանականությունը փոքր է, որ նա սահմանադրությանը հակառակ գնա:

Սակայն Ելցինի շրջապատում, որի ավելի նեղ շրջանակներում ձեւավորվել է «ընտանիք» հասկացությունը, մոտալուտ իշխանափոխության հետ նյարդայնություն է զգացվում: Այդ մարդիկ հիմնավորված երկյուղ ունեն, որ շուտով կկորցնեն իրենց կշիռը եւ ազդեցությունը, ինչպես նաեւ կենթարկվեն քրեական հետաքննությունների: Նրանք ցանկանում են բարձրագույն պետական պաշտոնին տեսնել մի մարդու, որը մեծ հավով ամեն ինչ անփոփոխ թողներ: Ժառանգականության երաշխիք կարող էր դառնալ Չեռնոմիրդինը, սակայն կառավարության նախկին ղեկավարի ոչ խարիզմատիկ անձը պայմանավորում է նրա ընտրվելու փոքր հավանականությունը: Զարմանալի չէ, որ Ելցինի թուլության շնորհիվ Մոսկվայում կենտրոնական գործոն դարձած նախագահի վարչակազմի ղեկավար Վոլոշինը վերջերս ակնարկել է, որ մեծ հաճույքով նախագահական պաշտոնին կտեսներ Ստեպաշինին Ելցինի հավասարիմ ժառանգորդին:

Սակայն Ստեպաշինն էլ, բնակչության հարցումների համաձայն, այդքան չի ընկնում մեծ ժողովրդականությամբ: Ավելի գերադասելի են պաշտոնանկ արված վարչապետ Պրիմակովի, որը վերջին ժամանակներս հասարակության առջեւ ակտիվորեն ներկայանում է ընտրություններին իր մասնակցության հարցը, ինչպես նաեւ Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի հնարավորությունները: Բոլորովին տարբեր բնավորություններով այս երկու քաղաքական գործիչները շատ մտերիմ են իրար հետ, սակայն ոչ նախագահի: Ելցինը Պրիմակովին ամենից առաջ հեռացրեց այն պատճառով, որ ի դեմս նրա լուրջ մրցակից էր տեսնում: Նույնը վերաբերում է նաեւ Լուժկովին: Կրեմլի եւ քաղաքապետարանի հարաբերությունները երկար ժամանակ է սառել են, իսկ վերջին շաբաթներս ակնհայտ բենամության են վերածվել: Լուժկովը նախագահական վարչակազմին մեղադրել է իրեն հասարակության աչքին հեղինակազրկող արշավի թիրախ դարձնելու համար: Կրեմլին նա մեղադրում է նաեւ վերջերս Մոսկվայի շրջակայքում ուղղաթիռով շրջայցը արգելելու համար:

1993-ի աշնունից հոկտեմբերից հետո, երբ Լուժկովը Ելցինի կողքին էր, շատ քիչ են հոսել: Նրանց միջեւ այժմ փոխադարձ անվստահություն է: Լուժկովը ավելի ակնհայտորեն է հեռանում Կրեմլի իր ղեկավարից, քանի որ վերջինիս ժողովրդականությունը գրեթե զրոյի է հավասար: Երեւ շաբաթ առաջ նա Ելցինից պահանջել էր առողջական վիճակի ծանրացման հետ կապված եզրակացություններ անել եւ պաշտոնաթող լինել:



Լուժկովին են վերագրում նաեւ արտագնա նախագահական ընտրություններ անցկացնելու շահագրգռությունը, քանի որ ժամանակը նրա դեմ է աշխատում: Իրականում քաղաքային իշխանությունները խրված են ֆինանսական խնդիրների մեջ: Եթե Մոսկվան նույնիսկ պայմանավորվի վարկատուների հետ պարտքերի վերակառուցման մասին, ապա Լուժկովի ժողովրդականությանը նպաստող ծրագրերի համար դրամ հիշ է լինելու: Ուստի, ակնհայտորեն նախընտրական նպատակներով երկրով մեկ բաց դրամապանակով ճանապարհորդող Լուժկովը պետք է զսպի իր առատաձեռնությունը: Ճգնաժամից հետո մայրաքաղաքը սիրված էր տնտեսել եւ մեծացնել վաճառքի հարկերը: Մոսկովյան հաջողության մոդելը նախընտրական պայքարում որպես գլխավոր փաստարկ ներկայացնող Լուժկովի կողմնակիցների համար սա իրադարձությունների անցանկալի զարգացում է:

Հենց սրան հարվածեց նախկին վարչապետ Կիրիենկոն, որը հայտարարեց քաղաքապետի պաշտոնը գրավելու իր հավակնությունների մասին եւ որոշեց ընտրարշավի գլխավոր թեման դարձնել քաղաքային բյուրոկրատիայի շրջանում արմատացած կաշառակերությունը: Սակայն Լուժկովին քաղաքապետի պաշտոնից հեռացում չի սպառնում: Լուժկովի նախընտրական ռազմավարները Կիրիենկոյին դիտում են որպես Կրեմլի մարիոնետի, որը Լուժկովին հեղինակազրկելու համար ցանկանում է Մոսկվայի կյանքի սվերոս կողմերը դարձնել մամուլի մշտական թեման: Կիրիենկոն նույնպես փորձում է առաջադրել իր անկախությունը, ուստի ինքն էլ է պահանջել Ելցինի պաշտոնանկություն:

Լուժկովը դեռ չի առաջադրել իր թեկնածությունը նախագահի պաշտոնին, սակայն նրա հավակնություններն ակնհայտ են: Նրա քայլերը նպատակաուղղված են եւ զգույշ: Վերջին օրինակը Մոսկվայի քաղաքապետի ընտրությունների տեղափոխումն է դեկտեմբեր: Մինչ այդ որոշված էր, որ դրանք տեղի կունենան նախագահական ընտրությունների հետ միաժամանակ, ուստի Լուժկովը չէր կարող միանգամից երկուսին էլ մասնակցել:

Խիստ կասկածելի է, թե Կրեմլը լծակներ ունի ազդելու մեկ տարի հետո ծրագրված ընտրությունների վրա: Տարածաշրջաններում ընտրությունները ցույց տվեցին բնակչությունը չի ընդունի իշխանությունների յուրահանչյուր թեկնածուի: Իշխանության հեղինակությունը այնքան փոքր է, որ Կրեմլի հովանավորյալ ցանկացած թեկնածու անհաջողության կմատնվի: Սակայն Լուժկովի ասեղի ծակոցներն էլ կարող են անօգուտ լինել, ընտրական թերթը վկայակոչելով տեղեկացնում է Ինտերֆաքս գործակալությունը:

Պատրաստեց
ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Լեհերը փոխհատուցում են պահանջում պետությունից

1939 թ. սեպտեմբերի 23-ին Ռիբենտրոպի եւ Մոլոտովի գաղտնի համաձայնագրով նացիստական Գերմանիան եւ ԽՍՀՄ-ը կիսեցին Լեհաստանը: Այժմ, 60 տարի անց, վերջինս դեռ չի փակել պատմության հաշիվները: Ավելին, շատ հավանական է, որ դրանց դիմաց վճարի հենց Լեհաստանի պետությունը: Բանն այն է, որ Ողջակիզումը վերապրած Լեհաստանի հարյուրավոր քաղաքացիներ եւ նրանց ժառանգները մի քանի օր առաջ Նյու Յորքում բողոք են ներկայացրել իրենց պետությանը: Պատճառը ոչ թե երկրորդ աշխարհամարտի տարիներին լեհական տարածքում նացիստական ճամբարների ստեղծումն է, այլ պատերազմից հետո կոմունիստական վարչակարգի բռնագրաված 100 հազար «լքված» կալվածքների դիմաց փոխհատուցում ստանալու պահանջը:

Բողոքարկու լեհերը Նյու Յորքում իրենց հայցադիմումները ներկայացրել են հայտնի դատավոր Քորմանին, որն անցյալ տարվա ամռանը կարողացավ բվեյցարական բանկերից 125 մլրդ դոլար կորզել Ողջակիզման զոհերի եւ նրանց հարազատների համար:

Լեհաստանի պետությանը հանգիստ չի տալիս նաեւ մեկ ուրիշ դատական գործ: «Սիբիրցիների միությունը», որը միավորում է երկրորդ աշխարհամարտից հետո Սիբիր տաժանակրության ենթարկված 86 հազար լեհերի, նույնպես դատի է տվել պետությանը: «Միության» ներկայացուցիչների կարծիքով, տալինիզմի տարիներին ենթարկված շուրջ 1,5 մլն լեհերի (նրանց մեկ երրորդը զոհվել է) հարազատները, ինչպես նաեւ վերապրողները պետք է նպաստներ եւ փոխհատուցում ստանան Լեհաստանի պետությունից: «Պուեն» հանդեսը տեղեկացնում է, որ պետությանը ներկայացված բողոքագրում ընդգծվում է մասնավորապես այն հանգամանքը, որ ժամկետանց պարտքերին վերաբերող 1996 թ. ռուս-լեհական պայմանագրում «սիբիրցիների» հարցը նույնիսկ չի էլ արծարծվել:

Պ. Ք.

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ոսկին այլեւս «համաշխարհային փող» չէ՞

Մարքսը դպրոցում շուռ է գալու

Հուլիսի 7-ի երեկոյան մոսկովյան ՕՊԹ հեռուստաընկերության «Այնուամենայնիվ» ծրագրի մեկնաբան Միխայիլ Լեոնտեւը ցմփոթեցնող նորություն հայտնեց. Անգլիայի կենտրոնական բանկը որոշել է հրաժարվել ոսկուց, որպես պահուստային արժույթից, եւ իր պաշարների կեսը՝ 415 տոննա, հանել վաճառքի: Ըստ Լեոնտեւի, այս քայլի արդյունքում ամենից ավելի դրամավարկային քաղաքականության ճկունությամբ է պայմանավորված, քան ազգային բանկերում առկա ոսկու պաշարով:

Տնտեսագետ չեմ եւ այս դրույթը վիճարկել չեմ կարող: Բայց եթե հարցն այժմ իրոք այդպես է դրվում, ապա ոսկին, որպես Մարքսի բնորոշած «համաշխարհային փող», կորցնում է իր հրապույրը: Սա մի ամբողջ հեղաշրջում կարող է լինել քաղաքատնտեսության պատկերացումներում: Կորցնելով «համաշխարհային փողի» ֆունկցիան, ոսկին չափազանց արագ կարժեզրկվի եւ կդառնա սովորական մետաղ, ընդամենը զարդեղենի հումք: Ինչպես, ասենք, արծաթն է այսօր: Նկատի առնելով ոսկու արտահանման ծավալների կտրուկ մեծացումն ամբողջ աշխարհում, որն այժմ կազմում է տարեկան մի քանի հազար տոննա այն դեպքում, երբ ամբողջ անցյալ հարյուրամյակում արտահանվել է ընդամենը 10 հազար տոննա, կարելի է կանխատեսել համաշխարհային տուկայի գերհագեցում նաեւ ոսկյա զարդեղենների առումով: Սա իսկապես «վատ լուր» է նաեւ մեր երկրի համար, քանզի մենք էլ ոսկու արտադրություն եւ հումքային բավական մեծ պաշարներ ունենք, եւ ոսկու «դերակատարության» փոփոխությունը հարված կլինի Հայաստանի պետական բյուջեին էլ: Չեմ ասում, որ իբրեւ «համաշխարհային փող» հանդես եկող ցանկացած տարադրամ կտրուկ կմեծացնի տվյալ երկրի (ամենահավանականն է՝ ԱՄՆ-ի) տնտեսական ու քաղաքական ազդեցությունն աշխարհում, այստեղից բխող բոլոր հետեւանքներով:



Ինչպես էլ լինի, մենք կանգնած ենք նույն Մարքսի բնորոշած «ադրանքային ֆետիշներից» մեկից եւս հրաժարվելու փաստի առջեւ: Թեեւ դա կոնկրետ ոսկուն չէր վերաբերում, բայց անցյալի մեծ տնտեսագետը կանխատեսում էր այդպիսի բազմաթիվ «ֆետիշների» փառազրծումը: Իսկ եթե նրա այդ կանխատեսումն իրականանում է հաջորդով, ապա դա արդեն մեղմ հաճարվել չի կարող: Սպասենք իրադարձությունների զարգացմանը:

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵԾԱՇՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

40 միլիարդ. շա՞տ է, թե՞ քիչ

Այդ գումարով կարելի է մի ամբողջ տարի հոգալ Միացյալ Նահանգների բոլոր կարիքավորների հոգսերը, բարձրացնել նրանց սոցիալական մակարդակը, գրում է «Բրիսլն սայնս մոնիտոր» թերթն իր հունիսի 28-ի համարում, մեջբերելով Բոստոնում գործող «Միացում հանուն առաջ տնտեսության» շարժման ներկայացուցիչ Բեթսի Լեոնդար-Ռայթի խոսքերն այն առնչությամբ, որ վերջերս հանրահայտ «Ֆորբս» գործարար շրջանակների ամսագրի հրապարակած աշխարհի ամենահարուստ մարդկանց ցուցակում «Մայքրոսոֆթ» ընկերության նախագահ Բիլ Գեյթսի հարստությունը մեկ տարում ավելացել է մոտ 40 միլիարդով, 51 միլիարդից դառնալով 90 միլիարդ: «Ֆորբսի» հրապարակումը հնարավորություն էր ընձեռել մի կողմից ավելացնելու թերթի ժողովրդականությունը, մյուս կողմից՝ արտահայտելու «հնաոճ» ազատականների բողոքը, թե հարուստներն է՛լ ավելի են հարստանում եւ նրանց համար մի քանի ժամվա ընթացքում մեկ միլիարդ կորցնելը ոչինչ չի նշանակում: Օրինակ վերջերս, նշում է հոդվածի հեղինակ Դեյվիդ Ֆրենչիը, Բիլ Գեյթսի հարստությունը առավոտյան ժամը 11.56-ի դրությամբ գնահատվում էր 97.3 միլիարդ դոլար, մինչդեռ ցերեկվա ժամը 3.26-ին՝ 96.4 միլիարդ դոլար: Պատճառը «Մայքրոսոֆթն» իր 141. 1 մլն արժողությամբ բաժնետոմսերի գների անկումն էր բորսայում այդ մի քանի ժամվա ընթացքում: Բայց սոցիալական սանդղակի հակառակ կողմում ապրողների համար նույնիսկ դրա մեկ տասներորդ կամ մեկ հարյուրերորդ մասն անգամ շատ բան է նշանակում:

Հարստությունը, ճիշտ է, ունի նաեւ իր բացասական կողմերը, որոնցից մեկն, օրինակ, նախանձ առաջացնելն է: Եվ իրոք, Միացյալ Նահանգներում հարստության բաշխման ծայրահեղ անարդարության վերաբերյալ շատ հիմնավոր հարցեր կան: Այստեղ, Նյու Յորքի համալսարանի հարստության ուսումնասիրության մասնագետներից էդուարդ Վոլֆի կարծիքով՝ դրանցից մեկը փողի միջոցով իշխանություն եւ խոշոր ազդեցություն ձեռք բերելու հարուստների ձգտումն է: Այստեղից էլ պարզ կարող է դառնալ, թե ինչու կոնգրեսը չի կարող պաշտպանել այնպիսի միջոցառումներ կամ նախագծեր, որոնք դեմ են հարուստներին: Նման քայլը պարզապես քաղաքական ինքնասպանության կնմանվեր, բացատրում է նա: Կարծիք կա նաեւ, որ հարկերից ազատելը հարուստներին հնարավորություն կտա առավել աշխուժացնելու գործարարությունը եւ դրանով զարկ տալու երկրի բարգավաճմանը: Բայց եթե նրանց ազատեն հարկերից, արդա՞ր է մյուսներից՝ նվազ պաշտպանյալներից, կորզել այդ հարկերը: Գեյթսի գուշ «արժեքը» ավելի մեծ է, քան 10 երկրների (կենտրոնական Ամերիկայի երկրներ, Չինաստան, Բոլիվիա, Հայիթի, Գրենադա, Հոնդուրասի Հանրապետություն) տարեկան համախառն արտադրանքի արժեքը միասին:

Երկրում պարտքերի բիզը զգալիորեն աճել է, եւ այս չափազանց մտահոգիչ երեւույթ է, է շեշտում է Վոլֆը, որն իրեն աջակցող դեմոկրատ է համարում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Թատրոնի պրոզան ու պոեզիան կամ «Ցանկություն» տրամվայը»

Առաջին անգամ անսովոր դայմաններում ենք դիտում ներկայացումը. ոչ թե դահլիճից, այլ բեմից: Ոչ թե բեմում բեմ, որ էլի է եղել, այլ բեմում՝ դահլիճ կամ հանդիսասրահ: Բնական է. նախքան ներկայացումն սկսելը, զարմանքով, ինչ էլ դժկամությամբ թույլ ենք տալիս, որ մեզ տանեն-լցնեն բեմ, ճաշակենք նրա խոչուխութերը, մերկ տախտակամածը, վարագույրների շերտերն ու ոլանները, սդասարկու անձնակազմի առնին եռուզեռը, բովանդակ դրոզան (էլ բան չունեի՞ն): Ճիշտ է, բեմի դրոզան ժամանակին առաջինը մեզ ցույց տվեց Յու. Լյուբիմովը՝ Տագանկայի թատրոնում, սակայն սոսկ մեկ՝ դահլիճի դիտակետից: Այս անգամ ուրիշ է. ավելին. ասես ամեն ինչ թատրոնի «դեմ» է. մանավանդ լուսարձակների վիթխարի սա՞ռը, թե՞ դասը... Իսկ ի՞նչ հաճույք է, երբ փութով տեղդ ես գտնում դահլիճում, զգում, թե ինչպես է նվազում լուսավորությունը, լռում ամեն ձայն ու շշուկ եւ իջնում հաճելի անակնկալի սդասումը...

...Սննկաս էլ սկսվեց. մեր միջով «սյուրի դես» անցավ դարասկզբի հագուկապով, լայնեզր գլխարկով, ճերմակազգեստ ծաղկավաճառուհին ու մինչ ուշի կգանք լսում ենք աջից հայտնված Բլանշի առօրեական հարցը՝ տրամվայի կանգառի մասին, բայց որը մի ինչ շանթում է մեզ. սկզբում՝ «Ցանկություն» կանգառն է, հետո՝ «Գերեզման»... Դու արդեն ներկայացման տիրույթում ես եւ քեզ հետ «հոգեփոխության» դես բան են անում՝ վերածում են իրադարձության մասնակցի, որ վերջում էլ դարձնեն «հանցակից»...

Թենեսի Ուիլյամսին մենք գիտենք բեմերից ու փոքր էկրանից՝ «Ադակե գազանանոց», «Ամառ եւ մշուշ», «Տարված ծխածաղիկներ» եւ «Ցանկություն» տրամվայը» դիեսներով: Սոցիալական անարդարության եւ գլխիվայր ծուռ եկած արժեքների թեման ինարական-դրամատիկական կտրվածքով դիտարկող հեղինակի մտահոգության առարկան եղել ու մնում է նուրբ, անզոր երազող-չարչրկվող հոգիների տառապանքը: Ծանր կյանք ապրած, բայց դեռեւս լավի սդասումը չկորցրած Բլանշին խուլ ծայրամաս քրոջ՝ մոս բերել էր ոչ միայն կարոտը, սակայն այստեղ նա բախվում է չար, ընչաքաղց, անողորմ ուժի եւ կործանվում: Դա գոյության կռիվ է բարու եւ չարի միջեւ՝ չարի տիրույթում, որ այլ ելք չէր կարող ենթադրել, սակայն հայկական բեմադրության հեղինակն իր եւ իր ժողովրդի հավատի նեցուկները զորացնող հանգուցալուծում է գտել: Դրա համար նա բարդացնում է իր եւ Ստենլիի դերակատար Մուրադ Ջանիբեկյանի խնդիրը չարության դատճառ-հիմքեր ենթադրող լուծումներ գտնում: Բնական է, որ չարն ավելի գազազում եւ օրհասական կռվի է մտնում, երբ զգում է իր տիրույթին սդառնացող վտանգ: Դա օրինավոր ու բարի Բլանշի ներկայությունն է. նա է սդառնում սեղ խրել դարտի մեջ, ուրեմն առանց միջոցների խտրության դեմ է ճգնել, ոչնչացնել նրան: Երիտասարդ Մուրեն Շահվերդյանը, գլխավոր դերակատարի հետ, չափի մեծ զգացումով հնարամտում է սեղ խրելու սողանցքներ եւ հետեւողականորեն զարգացնելով, նախադատրաստում է իր հանգուցալուծումը, իհարկե, առանց հակամարտության մեջ մտնելու հեղինակի հետ: Մեր դարի 40-ականների վերջին գրված դիեսի ընթերցման մեջ հայ մեկնաբանը կարեւորում է իր ժողովրդին բարու եւ գեղեցիկի հավերժության գաղափարը ներշնչելը, անհրաժեշտաբար դիմելով նաեւ ոչ բարդ, սակայն տարողունակ խորհրդանիշների: Մինչ մենք տարտափով գնդվել ենք ուրիշ բեմադրություններից ունեցած ծանր վերհուշից (զսդաշտադիկ հագցնող բիրտ ձեռքը եւ Բլանշի ուրատաղատ ճիչերը), բեմադրիչը բարձրացնում է դահլիճը բեմից զատող դատը, եւ մենք հանց երազ տեսնում ենք հեռվում թե բարության ոգի ծաղկավաճառին, դեռի ում ուղղվում է Բլանշը... Եվ դժվար գտնվի հանդիսատես, որ անհաղորդ մնա դահի բանաստեղծական ու հուզական այս տեսադատկերին... Ու հենց այստեղ էլ դիտի հիշենք թատրոնի գլխավոր ռեժիսոր Վահե Շահվերդյանին: Նրբանկատ լինենք, բայց ընդունված է, որ դիդլոմանտներին ամեն կերդ սատարում է այն թատրոնի գեղարվեստական ղեկավարությունը, ուր եւ ում մոս առաջին բեմադրությունն է անում նորընծան: Եվ ոչ մի արատոց կամ անբնական բան՝ եթե կրտսեր Շահվերդյանի բեմադրության մեջ զգացվի ավագ Շահվերդյանի «ձեռագիրը»: Այս դարագայում դա ներին ստեղծագործական այնդիսի համախոհությամբ եւ գեղարվեստական իրացումով է ի հայտ եկել, որ դժվար է տարանջատել. նշել, թե որտե՞ղ է սկսվում ու ավարտվում մեկը կամ մյուսը: Ընդսմին դժվար չէ որոշ տեխնիկական բացահայտումների եւ հնչունաղմուկային, երաժշտական եւ տեխնիկական հնարների մեջ չտեսնել այն, ինչ նորագույն սերնդի մտածողությունն է: Կարծում ենք նաեւ, որ նրա արժանիքն է բեմադրության հուզական ու թրթռուն երաժշտական-գեղարվեստական կերդարը, որ հառնում է ընտիր երգերի եւ երաժշտական ոիթմերի ամբողջական կամ հատվածաբար օգտագործումից: Հիշենք նաեւ մոտեցող եւ հեռացող տրամվայի անիվների ահագնացող դղրդոցի հետ, տարափի դես վրա տվող լուսարձակների վառ, անհանգստացնող շառագույնը, որ արատավոր հակամարտություն է դառնում Բլանշի եւ Միտչի թեման դարուրող ցերեկային խաղաբեր լուսավորության դարագայում:

Այս բեմադրության առավելություններից առաջնայինը բեմադրիչի եւ դերասանախմբի գեղարվեստական միտումների ներդաշնակությունն է: Անտարակույս, գլխավոր հերոսուհու անհերեւակայելի բարդ կերդարի հաջողության մեջ իր բաժինն ունի բեմադրիչը, սակայն այդ ո՞ր բեմադրիչը եւ ո՞ր դերասանուհուն կարող է մարմնավորման ընտրի, հուզական ներին հմայք ներարկել: Այնդես որ, ինչ տեսնում ենք, երիտասարդ եւ շատ օժտված Նելլի Խերանյանի արդար վաստակն է: Լրջմիտ, զուսդ, հուզականության արժեքը գիտցող դերասանուհին մեծ խնամքով է մշակել յուրաքանչյուր բառը, ճշտել խաղընկերների հետ ունեցած փոխհարաբերությունները եւ դրանց հետ ներդաշնակվել, սակայն առաջին խաղերն արդեն դրա անհրաժեշտ երաշխիքը տալիս են:

Չափազանց բարդ ու անկանխատեսելի է Մուրադ Ջանիբեկյանի Ստենլին: Մարդ-գազանի կամ գազան-մարդու «չար ոգին», որդիսին նրան կոչում է հեղինակը, բեմական նկարագրում «շեղումներ» ունի. կարող է եւ սիրահաճ ու խոսքաշեն, այլ խոսքով՝ մարդ լինել, սակայն դա ակնթարթային է. խորքում նա անագորույն գազան է: Ազգակցական, մարդկային ոչ մի սրբություն. նույնիսկ Բլանշի ծննդյան օրը սեւագրեց «հարյուր տոկոսանոց ամերիկացին», ինչպես ինքն է հդարտությամբ հայտարարում: Բլանշի հանդեպ բռնամանը հասնում է կենսաբանական ատելության, քանզի նա եկել է եւ կարծես ուզում է մեկ այլ աշխարհի գոյություն հաստատել... Ո՞վ եւ ինչպե՞ս է համարձակվում. սա իր տիրույթն է, իր օրենքն է իշխում: Բայց ահա, Բլանշի փոքրիկ ճամդրուկում նա մի մեծ կաղուկ նամակ հայտնաբերեց... եւ առաջին անգամ զարթեց: Չէ, ինչ-որ մեկը համարձակվում է իր գոյն ու կերդը դարտադրել... Առանց այն էլ Բլանշի գալուստը ցանուցիր արեց կնոջ ծննդներից ժառանգություն ստանալու հույսը... Հանկարծ ու... Ստելլայի եւ իր օրինավոր ընկերոջ՝ Միտչի հետ նրանք ո՞ւժ դառնան... Արդեն կինը սկսել է արժանադատվությունից խոսել, իսկ Միտչն էլ կարծես զվարթացել է... Եվ ահա ուրուրի դես նա վրա է ընկնում, աղտոտում, աղականում, Բլանշին ու Միտչին այնդես ու այնքա՞ն հեռու նետում միմյանցից, որ դարձի ճամփա չի մնում... Սոսկ երկուսին չէ, որ ոչնչացնում է, այլ բարու եւ օրինավորի մի աշխարհ: Ամեն ինչ բարին, լավը խլացնելու, վերացնելու համար, սակայն... դարզվում է, դա էլ հետաքրքիր չէ. բեմադրական այս միտումը ոչ միայն զորանում, դառնում է հանգուցալուծում, այլեւ կատարտիկ համակարգի վճռորոշ գործոն: Չարը հզոր է, բայց ոչ անխոցելի կամ անդարտ, եւ նրա զրահը խոցելու հնարները մեծագույն զգուշությամբ «կաթեցվում» են բեմական կտավի մեջ: Երեւի կերդարն էլ ունի իր «դրամատուրգիան». զարգացումը, բարձրակետը, ավարտը: Ջանիբեկյան-Ստենլիի համար դա ավարտակետին նախորդող դրվագն է: Բլանշին հասցրած իր ավերմունքից օվար ու շփոթահար Ստենլին լռում է, ադա հայտնվող բժշկին տեսնելով, գոռում՝ նրան տանե՞լ-հեռացնե՞լ... Դա մարդկային գոռոց չէ, այլ շեղբի հարված ստացած գազանի ոռնոց: Եվ որքան էլ աղաղակը տարտափազդու է, միեւնույն է, ոչ թե ուժի, այլ դարտության հաստատում է: Հաջորդող «Ստելլա-ա՞-ա՞» աղաղակը նույնդես գազանի թուլության վկայությունն է. նման ծեղին կառչող խեղդվողի կանչին: Բայց եւ կյանքի ու ադրելակերդի նոր ընտրության ենթադրություն. սա է կարեւորը: Պատմի լուսավոր թեման սկսում է Բլանշից ու տարածվում Ստելլայով ու Միտչով (զուր չէր Ստենլիի «լայնաճակատ» հարձակումը): Հերմինե Վահանյանի Ստելլան խելքով չի փայլում, սակայն ունի սեփական հայեցակետ, ինքուր է, կանացի. Բլանշի «հրումով» դառնում է արժանադատիվ: Հիմա նա այլեւս նախկին կյանքով չի ադրի. ինչ-որ տեղ՝ դերասանուհու եւ բեմադրիչի այս միտումը ենթադրում է, թե բարու հավերժության թեման Ստելլան է շարունակելու, գուցեեւ անարգե՞լ... Միակ թերությունը երբեմն անհավասար, կորչող խոսքի հանգամանքն է: Իրենց կերդարները եւ նրանց նշանակությունը բեմադրության ընդհանուր հյուսվածքում, ճիշտ են ըմբռնել եւ հավատի անձնավորումով են մատուցում եւ Գալա Մեսրոպյանը (Յունիս), եւ Ալբերտ Սաֆարյանը (Ստիվ), եւ նրանց ստեղծած մթնոլորտն ու ոիթմը նույնքան կարեւոր է բեմադրական ասելիքին, որքան գլխավոր հերոսներինը. մի գործոն եւս կառուցված գեղագիտական որոշակիությամբ:

Լինում է դահ բեմադրության մեջ, երբ իջնում է ճակատագրական լռությունը եւ դատասխանի սդասումով քարանում է, մի շունչ, մի հոգի է դառնում հանդիսասրահը: Նման մի դահ է բժշկի մուտքը, երբ հնչում է բուժքրոջ խոսքը զատաքրիկի մասին: «Կարծում եմ դրա անհրաժեշտությունը չի լինի». մեն մի նախադասությունն այնդիսի մարդկային, դրական հնչերանգով է արտաբերում Գուրգեն Արզումանյանը, որ մեր դրկումը թուլանում է ու ասես միանգամից հայտնվում ենք մարդկային հանգրվանում: Արտիստը կարողանում է համընթաց լինել դրական լիցքերի հավելման բեմադրական հղացմանը, սա է կարեւորը: Երկու ժամից ավելի դատումը մեզ դահեց «մազե կամրջի վրա»...

...Շաղված ու անզոր, նուրբ ու դյուրաբեկ Խերանյան-Բլանշը անդուռ դատի մոս է խարխափում ու հայտնվում բաց-արձակ հեռասանում, ուր հորիզոնում ճերմակ վարդերով նրա ճամփան է դահում ծաղկավաճա՞ռը, թե բախտավաճա՞ռը... Բեմադրիչը «թունելի ծայրում» ոչ թե կայծ, այլ մի ամբողջ հրավառություն է արել եւ թող գտնվի դողդատե նյարդերով մեկը, որի սիրտը չծփա կամ չխայտա այս ավարտից:

Այսդես համարձակորեն այս բեմադրության հեղինակները (նաեւ նկարիչ Եվգենի Սաֆրոնովը) մեզ ներքաշում են թատրոնի հեռնամատի դրոզայի մեջ եւ հանում վեր, ըմբռնելու տալիս լիացնող ու հիացնող դոեզիան. վերջին սա է կարեւորը:

ՎԱՐՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բլանշ Նելլի Խերանյան (աջից). Ստենլի Մուրադ Ջանիբեկյան. Ստելլա Հերմինե Վահանյան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ովքե՞ր են վկաները

Հայ ավետարանական ընկերակցությունը (ՀԱԸ) առաջարկում է «Ովքե՞ր են Եհովա Աստծու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վկաները» գրքույկի երկրորդ հրատարակությունը:

Գրքույկի առաջաբանում ՀԱԸ-ի Հայաստանի ներկայացուցիչ վեր. Ռընե Լեւոնյանը գրում է.

«Այս գրքույկ-նամակը աստվածային սիրո արտահայտում է նաեւ «Եհովայի վկաներ»-ի նկատմամբ: Նրանք Հիսուս



ԸՆՍ ԳՐՔՈՒՅԿՈՒՄ

- Ի՞նչ է աղանդը
- Ովքե՞ր են «Եհովայի վկաները»
- Ո՞վ է Աստված
- Ո՞րն է փրկության ճանապարհը
- Ովքե՞ր են քրիստոնյաներ

Քրիստոսի ստեղծագործությունն են, ինչպես մենք, եւ մեր աղոթքն է, որ այս նամակը Սուրբ Հոգու զորությամբ նրանց կօգնի ճանաչել մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, ավելի լավ ճանաչել հավատը»: Հարգելի՝ ընթերցող, ժամանակակից աշխարհում արագ տեմպերով աճում է կեղծ ուսմունքների եւ աղանդների քանակը: Քրիստոնյաները, երբեմն հարաբերվելով դրանց հետ, չունեն բավական գիտելիքներ դատասխանելու իրենց հավատը: Հուսով ենք, որ այս գրքույկը կօգնի քրիստոնյա հավատացյալներին հասկանալու աղանդների էությունը, իսկ ոչ հավատացյալներին հետու մնալու նրանց ազդեցությունից»:

Գրքույկը ձեռք բերելու համար դիմեք Հայ ավետարանական ընկերակցության երեւանի գրասենյակ. գրքույկը տրվում է անվճար:

375028
Երեւան
Նիկոլ Դուման 22

ՀԱԸ Ի ՍԱՍՈՒԼԻ ԲԱԺԻՆ

Լեզվի դեսական տեսչությունը շարունակում է ներկայացնել լրատվամիջոցներում նկատված սխալները

1. «Այսօր դամոկլյան սրի դես ծառացել է կառավարության առջեւ»: Դամոկլյան սուրը չի ծառանում, այլ կախվում է (կախված է լինում) մեկի գլխին (գլխավերեւում):

2. «Ադրբեջանն արդեն բավականաչափ փոխզիջումներ արել է»: Փոխզիջումներ անում են մեկից ավելի կողմերը, իսկ դրանցից յուրաքանչյուրը զիջումներ է անում: Ուրեմն «Ադրբեջանն արդեն բավականաչափ զիջումներ արել է»:

3. «Հոգեբանական բարդույթները դեռ երկար ժամանակ իրենց զգացնել են տալու»: Զգացնել դատճառական բայն արդեն իսկ դարունակում է տալ-ի իմաստ: Ճիշտ է զգացնելու են կամ զգալ են տալու:

4. «Այսդիսի դաշինքի օրինակ է ԱԺՄ-կոմկուս գործունեությունը...»: Գործունեություն-ի փոխարեն դետք է լիներ՝ գործակցությունը:

5. «Այն մարդիկ, որոնք առնչվում են անկախության գաղափարի հետ, դուրս են մղվում մոռացության գիրկը»: Նախ՝ ոչ թե գաղափարի հետ, այլ՝ գաղափարին: Երկրորդ՝ գիրկը դուրս չեն մղվում: Երրորդ՝ երկիմաստությունից խուսափելու համար (իրե՞նք են մղվում, թե՞ ուրիշներն են մղում) դետք էր ձեւակերդել այսդես՝... գաղափարին՝ մատնվում են մոռացության:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Կիպրահայերի մասնակցությունը երաշխավորված է

Արդեն վստահորեն կարող ենք ասել, որ կիպրահայերի մասնակցությունն աշնանը Երեւանում կայանալիք համահայկական խաղերին երաշխավորված է շնորհիվ Կիպրոսի մարզական ֆեդերացիայի (ԿՕԱ) առատաձեռն նվիրատվության:

Արձագանքելով հայկական համայնքի դիմումին ԿՕԱ-ի նախագահ Դիմոս Յորդանիսը կիպրական խորհրդարանի հայազգի անդամ Պետրոս Գալայջյանին է նվիրել 10 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ մի չեկ, որով հնարավոր է դառնում տեղի երկու հայկական ակումբներից՝ ՀԲԸՄ-ից եւ Հայ երիտասարդաց միությունից 28 հոգանոց հավաքական մի խումբ ուղարկել Երեւան՝ մասնակցելու խաղերին:

Կիպրահայերի խումբը օրերին եւ առա մրցումներին մասնակցելու է հանրապետության բաժանյալ մայրաքաղաք Նիկոսիայի դրոշի ներքո:

Չեկի պաշտոնական հանձնման ժամանակ պրն Յորդանիսը (նկարում աջից երկրորդը) Գալայջյանին եւ կիպրահայ համայնքի երկու այլ ներկայացուցիչներին՝ Գեւորգ Չեյթունցյանին եւ տողերիս հեղինակին ասաց. «Սա մաս է կազմում մարզական միջոցառումները խթանելու կառավարության պաշտոնական քաղաքականության: Իմ պատասխանատվությունն ու պարտականությունն է օգնել կրոնական փոքրամասնություններին ընդհանրապես եւ հայկական համայնքին մասնավորապես: Այստեղ, այս պահին ես մի անգամ ես խոստանում եմ, որ ԿՕԱ-ն միշտ կլինի ձեր կողքին, եւ մենք ամեն ինչ կանենք ձեզ մարզական բնագավառում օգտակար լինելու: Մեր կառավարության քաղաքականությունն է հնարավոր ամեն օժանդակություն ցուցաբերել փոքրամասնություններին: Ես հետեւել եմ կիպրահայ մարզիկների գործունեությանը եւ վստահ եմ, որ նրանք հաջող են ելույթ ունենալու: Ես նրանց ամենայն հաջողություն եմ մաղթում առաջիկա խաղերի ընթացքում: Խաղերի անցկացման գաղափարը

հրաշալի է, եւ մաղթում եմ, որ դրանք այս եւ հետագա անգամներին հաջողությամբ պսակվեն»:

Կիպրոսի 2500 անդամ հաշվող հայկական համայնքը վայելում է կիպրական կառավարության համընդհանուր վստահությունն ու պաշտպանությունը: Կղզում գործող երեք հայկական տարական դպրոցները կառուցվել են կառավարության ծախսերով եւ ֆինանսավորվում են (ներառյալ դասատուների աշխատավարձերն ու թոշակները) կրթության եւ մշակույթի նախարարության կողմից: Այդ դպրոցներում ուսուցումը ձրի է: Կիպրահայերի հետագա միջնակարգ կրթությունը մեծապես հովանավորվում է կառավարության կողմից: Կիպրական սահմանադրության համաձայն հայերն օգտվում են հույն մեծամասնության բոլոր իրավունքներից: Նրանք ոչ միայն մասնակցում են նախագահական, խորհրդարանական եւ տեղական ընտրություններին, այլ նաեւ ընտրում իրենց ներկայացուցիչներին հանրապետության խորհրդարանում:

ՏՈՐԹ ՏԵՐ-ԲԱՐԱՂԱՂ

«Մայիս Ուիքլի» շաբաթաթերթի հրատարակիչ, «Ազգի» սեփական թղթակից Կիպրոսում

Թենիսիստների հերթական ցուցակները

Հրապարակվել են աշխարհի ուժեղագույն թենիսիստների եւ թենիսիստուհիների հերթական ցուցակները:

Տղամարդկանց ցուցակի առաջին հորիզոնականում Անդրե Աղասին է: Մի քանի տարի առաջ նա եղել է լավագույնը: Աղասին այս անգամ փոխարինել է Փիթ Սամփրասին: Նա այս մրցաշրջանում հաղթել է «Մեծ սաղավարտ» շարքի մրցաշարերից մեկում Ֆրանսիայի բաց առաջնությունում («Ռոլան Գարոս»): Իսկ օրերս երկրորդ տեղը գրավեց Ուիմբլդոնում:

Ուժեղագույն թենիսիստուհիների ցուցակը գլխավորում է Ուիմբլդոնի մրցաշարի հաղթող Լինդսեյ Դեւենպորտը: Մարտինա Հինգիսը, որի դիրքերը, թվում էր, թե անսասան են, գիջել է առաջին հորիզոնականը:

Ներկայացնում ենք 20 ուժեղագույն թենիսիստների ու թենիսիստուհիների ցուցակը: Փակագծում բերված են նախորդ ցուցակում նրանց գրաված տեղերը:

Տղամարդիկ

1(4). Անդրե Աղասի (ԱՄՆ) 3684, 2(2). Պատրիկ Ռաֆթեր (Ավստրալիա) 3673, 3(1). Փիթ Սամփրաս (ԱՄՆ) 3594, 4(3). Եվգենի Կաֆելնիկով (Ռուսաստան) 3212, 5(7). Գուստավո Կուերտեն (Բրազիլիա) 2810, 6(6). Թիմ Հենման (Անգլիա) 2690, 7(5). Ռիխարդ Կրայչեկ (Հոլանդիա) 2408, 8(8). Ալեխս Կորետխա (Իսպանիա) 2408, 9(9). Մարսելո Ռիոս (Չիլի) 2370, 10(14). Թոդ Մարտին (ԱՄՆ) 2332, 11(10). Կառլոս Մոյա (Իսպանիա) 2313, 12(12). Գրեգ Ռուսեդսկի (Անգլիա) 2307, 13(11). Մարկ Ֆիլիպիուսիս (Ավստրալիա) 2295, 14(13). Կարել Կուչերա (Սլովակիա) 2292, 15(17). Ֆելիքս Մանտիլյա (Իսպանիա) 1790, 16(16). Թոմաս Հաաս (Գերմանիա) 1779, 17(18). Նիկոլաս Կիֆեր (Գերմանիա) 1690, 18(19). Դոմինիկ Հրբատի (Սլովակիա) 1651, 19(20). Թոմաս Էնկվիստ (Շվեդիա) 1607, 20(21). Թոմաս Յոհանսոն (Շվեդիա) 1496 միավոր:

Կանայք

1(2). Լինդսեյ Դեւենպորտ (ԱՄՆ) 5590, 2(1). Մարտինա Հինգիս (Շվեյցարիա) 5293, 3(3). Շթեֆի Գրաֆ (Գերմանիա) 4500, 4(5). Վենուս Ուիլյամս (ԱՄՆ) 3474, 5(4). Մոնիկա Սելես (ԱՄՆ) 3411, 6(7). Մերի Պիրս (Ֆրանսիա) 2639, 7(6). Յանա Նովոտնա (Չեխիա) 2340, 8(9). Արանտա Սանչես-Վիկարիո (Իսպանիա) 2128, 9(10). Ամանդա Կոետցեր (ՀԱՀ) 1942, 10(8). Նատալի Տոզյա (Ֆրանսիա) 1935, 11(13). Բարբարա Շետ (Ավստրիա) 1828, 12(11). Սերենա Ուիլյամս (ԱՄՆ) 1819, 13(17). Աննա Կուրնիկովա (Ռուսաստան) 1744, 14(14). Դոմինիկ վան Ռուս (Բելգիա) 1685, 15(15). Ամելիա Մորեսմո (Ֆրանսիա) 1677, 16(16). Սանդրին Տեսյու (Ֆրանսիա) 1677, 17(18). Ժյուլի Ալար (Ֆրանսիա) 1669, 18(19). Պատրիցիա Շնայդեր (Շվեյցարիա) 1593, 19(20). Կոնչիտա Մարտինես (Իսպանիա) 1553, 20(22). Ելենա Լիխովցեւա (Ռուսաստան) 1362 միավոր:

ՖՈՒՏԲՈԼ

Առջեւում եզրափակիչն է

Ավարտին է մոտեցել ԱՄՆ-ում անցկացվող աշխարհի կանանց երրորդ առաջնությունը:

Հուլիսի 10-ին կայանալիք վճռական խաղում աշխարհի չեմպիոնի կոչումը կվիճարկեն ԱՄՆ-ի եւ Չինաստանի հավաքականները: Դա հայտնի դարձավ կիսաեզրափակիչ հանդիպումներից հետո: Դրանցից մեկում առաջնության կազմակերպիչ երկրի թիմը համառ պայքարում 2-0 հաշվով հաղթեց Բրազիլիայի հավաքականին: Ընդ որում, այս հանդիպումը մեծ հետաքրքրություն էր առաջացրել մարզասերների շրջանում: Բավական է ասել, որ Պալո Ալտոյի «Սթենֆորդ ստեդիումում» խաղին հետեւում էին ավելի քան 73 հազար ֆուտբոլասերներ: Մյուս կիսաեզրափակիչում Չինաստանի ֆուտբոլիստուհիները 5-0 հաշվով պարզապես ջախջախեցին Նորվեգիայի հավաքականին: Այս արդյունքը ավելի քան անսպասելի էր, քանի որ նորվեգուհիներն աշխարհի երկրորդ առաջնությունում նվաճել են չեմպիոն թիմի կոչումը:

Ութ թիմ կշարունակի պայքարը

Պարագվայում ընթանում է Հարավային Ամերիկայի 39-րդ առաջնությունը:

Արդեն ավարտվել են խմբային մրցաշարերը, եւ հայտնի են դարձել այն 8 հավաքականները, որոնք կշարունակեն պայքարը Copa America-ի համար:

Հաջորդ փուլ են մտել խմբերում առաջին երկու տեղերը գրաված հավաքականները, ինչպես նաեւ երկրորդ տեղերը գրաված երկու լավագույն թիմերը:

Առաջին խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պարագվայ	3	2	1	0	5-0	7
2. Պերու	3	2	0	1	4-3	6
3. Բոլիվիա	3	0	2	1	1-2	2
4. Ճապոնիա	3	0	1	2	3-8	1

Երկրորդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բրազիլիա	3	3	0	0	10-1	9
2. Մեխիկա	3	2	0	1	5-3	6
3. Չիլի	3	1	0	2	3-2	3
4. Վենեսուելա	3	0	0	3	1-13	0

Երրորդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Կոլումբիա	3	3	0	0	6-1	9
2. Արգենտինա	3	2	0	1	5-4	6
3. Ուրուգվայ	3	1	0	2	2-4	3
4. Էկվադոր	3	0	0	3	3-7	0

Պատ Արգենտինա-Ուրուգվայ խաղից (2-0)

Քառորդ եզրափակիչում, ըստ գրաված տեղերի, կհանդիպեն հետեւյալ զույգերը՝ Բրազիլիա-Արգենտինա, Կոլումբիա-Չիլի, Պերու-Մեխիկա, Պարագվայ-Ուրուգվայ:

ԹԵԹԵՎ ԱՍԼԵՏԻԿԱ

Ռեկորդ՝ օլիմպիական մարզադաշտում

ԻԱԱՖ-ի մեծ մրցանակ շարքի հերթական մրցաշարում, որը կայացավ Հռոմի օլիմպիական մարզադաշտում, աշխարհի նոր ռեկորդ գրանցվեց:

Մեկ մղոն տարածությունում Մարոկկոյի ներկայացուցիչ Հիշամ էլ Գերուժը ցույց տվեց 3 ռոպե 43,13 վայրկյան արդյունք, 1,26 վայրկյանով գերազանցելով

Հիշամ էլ Գերուժ

նախկին ռեկորդը, որը դեռեւս 1993 թվականի սեպտեմբերին սահմանել էր ալժիրցի վազորդ Նուրեդդին Մորսելին:

Իտալիայի մայրաքաղաքում անցկացված մրցումներում մասնակիցները բարձր արդյունքներ ցույց տվեցին մի շարք մրցաձեւերում: Հատկապես հաջող էին ամերիկացի մարզիկների մրցելույթները: Մերիոն Ջոնսը հերթական հաղթանակը տարավ կանանց 200 մ վազքում: Տղամարդկանց 100 մ վազքատարածությունում աշխարհի ռեկորդակիր Մորիս Գրինը միակն էր, որը 10 վայրկյանից ցած հասեց եզրագիծը: Նրա արդյունքն է 9,95 վայրկյան: Իրենց գերազանցությունն առաջադրեցին նաեւ Մայք Ջոնսոնը (200 մ), Ալեն Ջոնսոնը (110 մ արգելավազք): Նշենք նաեւ ռուս մարզիկների հաղթանակները: Օլիմպիական կրկնակի չեմպիոնուհի Ավետյանա Մաստերկովան վստահորեն առաջին տեղը գրավեց իր սիրած 800 մ վազքատարածությունում, իսկ նրա երիտասարդ ընկերուհի Ելենա Ելեսինան բարձր արդյունքով (2 մ) հաղթեց բարձրացատկում: Նոր հաջողության հասավ Մախմիտ Տարասովը: Նա ծողացատկողների պայքարում գերազանցեց բոլորին՝ ցույց տալով 5 մ 90 սմ արդյունք:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՐ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Ֆիբրոմա: 2. «Նորմա»: 3. Արմիս: 4. Լալայան: 7. Ացետոն: 9. Ցախակեռաս: 10. Ռոդիմենիա: 12. Պելագրա: 13. Պարադիս: 18. Դերվիշ: 19. Անամնեզ: 21. Մալինին: 24. Ավշար: 25. Աղանա:

Հորիզոնական

5. Ֆիլատով: 6. Արամյան: 8. Ամոիցիլին: 11. Սմբաս: 14. Քոչար: 15. Սեկոյան: 16. Ականաս: 17. «Սալոմե»: 20. Արտեմիս: 22. Անտառ: 23. Խիզար: 26. Քվազիմոդո: 27. Սերենադ: 28. Անալգին:



Ուղղահայաց

1. Ա. Դյումայի «Երեք հրացանակիրներ» վեպի հերոսներից: 2. Ամրոց Լեռնային Կիլիկիայում: 3. Գյուղ Հայաստանում, Արտաշատից արեւմուտք: 4. Ֆրանսիական օպերային բնորոշ ոչ մեծ արիա: 6. Չարչարանք, տառապանք, ...: 11. Դղյակ, պալաս, ...: 12. Կանեփ ցանած հողամաս: 13. Տաղաչափական հասկացություն, եռավանկ բանաստեղծական ոտ: 14. Գերմանացի ռեժիսոր, կինոդերասան, «ԴԵՖԱ» կինոստուդիայի հիմնադիրներից: 15. Ֆրանսիական օծանելիքի տեսականի: 16. Բուլղարացի պայծառատես: 20. Գյուղ Հայաստանում, Աղարանից հարավ-արեւելք: 22. Արեւելքում օգտագործվող ծխելու սարք: 24. Արեգակնային համակարգի մոլորակ: 25. Ձինամթերք: 26. Ծառա, տան աշխատող:

Հորիզոնական

5. Ազգությամբ հայ իտալացի արվեստաբան, գրականագետ, բժիշկ: 7. Արշալույսի աստվածուհին հին հռոմեական դիցաբանության մեջ: 8. Ինչպե՞ս էին անվանում Ավետարանը քարոզող Քրիստոսի 12 աշակերտներին: 9. Կրկեսի արտիստ: 10. Հայկական հեթանոսական տոմարի ամիսների 17-րդ օրվա անունը: 13. Քաղաք Հյուսիսարեւելյան Չինաստանում: 15. Հավազգի վայրի թռչուն: 17. Բնակավայր Թալին քաղաքից հարավ-արեւմուտք: 18. Այս մոլորակն ունի Տրիտոն եւ Ներեիդա արբանյակները: 19. Բոնխների հիվանդություն, ընչաքաղցիկ: 21. Ընչազուրկ, չունեւոր, ...: 23. Առեւտրական, շինարարական կամ արդյունաբերական ընկերությունների միասնական միավորում: 25. Արու աղավնի: 27. Ոչոունների ժառանգական տիրույթը: 28. Աշխարհահռչակ իտալացի օպերային երգիչ: 29. Նրբագեղ բուրդ:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
Օրվա հետքերով

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ

Միլոշեվիչի հրաժարականը պահանջող հանրագիրը ստորագրել է արդեն 100 հազար մարդ

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՈՊԱՆ: Հարավսլավիայի ընդդիմադիր Դեմոկրատական կուսակցության առաջնորդ Զորան Ջինջիչը ժամանել է Կոսովո, որպեսզի Սերբիայի ուղղափառ եկեղեցու առաջնորդ, պատրիարք Պավլեին կոչ անի պաշտպանել նախագահ Միլոշեվիչի հրաժարականը պահանջող շարժումը: Ջինջիչը մի շարք քաղաքներում բողոքի զանգվածային ցույցեր է կազմակերպում եւ հանրագիր է պատրաստում, որով հարավսլավական խորհրդարանից պահանջվում է պաշտոնանկ անել նախագահ Միլոշեվիչին:

Նիշի քաղաքապետի վկայությամբ, չնայած ոստիկանության արգելքին, հուլիսի 7-ին Միլոշեվիչի հեռացումը պահանջող հանրագիրը քաղաքում ստորագրել է 3000 մարդ, իսկ ընդհանուր առմամբ արդեն հավաքվել է մոտ 100 հազ. ստորագրություն:

Արդեն 3 օր է, ինչ Կոսովոյի Լեսկովաց քաղաքում ցուցարարները պահանջում են Միլոշեվիչի մտերիմներից տեղական մի պաշտոնյայի հրաժարականը: Այստեղ ցուցարարներին աջակցում է սերբական «Վերածնունդ» շարժման ղեկավար Վ. Դրաշկովիչը, որի կուսակցությունը նախկինում չէր աջակցում փողոցային ցույցերին:

Միաժամանակ ընդհարումներ են տեղի ունեցել Կոսովոյի Միտրովաչ քաղաքի սերբական եւ ալբանական թաղամասերի բնակիչների միջեւ: Դրանք դադարեցվել են ֆրանսիական խաղաղարարների միջամտությամբ:

Ջ. Ջինջիչը CNN հեռուստակայանին տված հարցազրույցում տեղեկացրել է, որ հուլիսի վերջին կամ էլ օգոստոսի սկզբին շարունակվող ցույցերին զուգահեռ նախաձեռնվում են նաեւ համընդհանուր գործադուլներ՝ դարձյալ Միլոշեվիչի հրաժարականի պահանջով:

Ինչպես հայտնի է, Սերբիայի ուղղափառ եկեղեցու առաջնորդը Միլոշեվիչին նախագահի պաշտոնից հրաժարվելու կոչ արել է արդեն: Հուլիսի 6-ին Սուրբ Սինոդը ծեռնամուխ եղավ Կոսովոյում տեղական ընդդիմության ղեկավարների հետ սեփական հակակառավարական խորհրդի ստեղծմանը, որի նպատակն է համոզել սերբերին, որ նրանք չլքեն երկրամասը:

Վանա լիճը՝ մահվան առարկա

Ըստ Փարիզի «Յառաջ» օրաթերթի հունիսի 30-ի տեղեկատվության, Վանա լճի շրջապատի պատասխանատուները ժողով են գումարել՝ քննարկելու լճի ջրերի կեղտոտման խնդիրը: Վանի քաղաքապետը նշել է, որ եթե անմիջական միջոցներ ձեռք չառնվեն, լիճը շուտով կարժանանա Ոսկեղջյուրի ճակատագրին, որն ամբողջությամբ կեղտոտված է: Նա Վանա լիճը համարել է «աշխարհում գեղեցկագույնը» եւ ներկաների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ լճի վճիռ, կապույտ ջրերն արդեն սկսել են պղտորվել: Կեղտոտման գլխավոր պատճառը կոյուղիներն են, որոնց միայն կեսն է, ըստ տեղեկատվության, հնարավոր գտել, իսկ մնացյալը թափվում է լիճ ամբողջությամբ: Քաղաքապետը հատկապես շեշտել է, որ լիճն արտահոսք չունենալով կատարելապես փակ շրջան է, եւ եթե ամբողջությամբ պղտորվի, ապա այլեւս անկարելի կլինի փրկել: Շրջանի մյուս քաղաքապետարանները եւս խոստացել են օգնել լիճը փրկելու աշխատանքներին:

Ադրբեջանում թերթերը լույս են տեսել դատարկ էջերով

ԲԱԿՈՒ, 8 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հուլիսի 6-ին Ադրբեջանի լրագրերը լույս են տեսել դատարկ էջերով: Սպիտակ էջերի վրա խոշոր տառերով տպագրված են միայն «Բողոքում ենք լրագրողների նկատմամբ գործադրվող բռնության դեմ» բառերը: Սպիտակ էջերը վկայում են, որ հրատարակչությունները միացել են Լրագրողների միության գործադուլին: Գործադուլի կոմիտեն նախատեսել էր պիկետ անցկացնել խորհրդարանի շենքի առջեւ, բայց իշխանությունները թույլ չեն տվել: Իրավական քաղաքականության եւ պետության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Զեյնալովը քաղաքի իշխանությունների որոշումն օրինական է համարում: Այլ վայրերում պիկետներ անցկացնելը չի արգելվում, արգելվում է միայն խորհրդարանի շենքի եւ մյուս կարեւոր պետօբյեկտների առջեւ դրանք անցկացնելը: Հենց այդ պատճառով էլ գործադուլի կոմիտեն ի նշան բողոքի որոշում է ընդունել թերթերը լույս ընծայել մաքուր էջերով:

Գործադուլի կոմիտեի նախագահ Ամաշովն ասել է, որ հուլիսի 9-ին լրագրողները նախատեսում են երթ անցկացնել: Նույն օրն էլ նրանք նախատեսում են գործադուլ անել: Բողոքի ծեռնարկմանը միացել է նաեւ «Զերկալո» լրագիրը: Նրա ներկայացուցիչ Շիխլինսկին ասել է, որ լրագրողներին ծեծելը, վիրավորելն ու նրանց նկատմամբ բռնությունները մարդու իրավունքների զանգվածային խախտումների բաղկացուցիչ մասն են:

«Ենի մուսավաթ» լրագրի թղթակից Թաղիսոյին ծեծելու առթիվ իր վերաբերմունքն է արտահայտել նախագահ Ալիեւը: Նա դատապարտել է անհայտ անձանց գործողությունները եւ նշել, որ մեղավորները կպատժվեն:

Հռոմի պապը կայցելի Վրաստան

ՋԻՈՒՆԻ, 8 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐՔ: Հռոմի պապ Հովհաննես Պողոս երկրորդի՝ մինչեւ տարեվերջ Վրաստան այցելելու մտադրությունը հաստատել է Վատիկանի պետնախարար, կարդինալ Սոդանոն՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիայի հետ Վատիկանում կայացած կոնֆիդենցիալ հանդիպման ընթացքում: Այդ մասին ասվում է Վրաստանի խորհրդարանի մամլո կենտրոնի հուլիսի 7-ին տարածած հաղորդագրության մեջ, որը նվիրված էր Զուրաբ Ժվանիայի Իտալիա ծեռնարկած պաշտոնական այցին: Վրաստանի խորհրդարանի նախագահը կարդինալ Սոդանոյին հաղորդել է, որ Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի եւ Ադրբեջանի նախագահի միջեւ կայացել է խոսակցություն, որի ժամանակ Հեյդար Ալիեւը ողջունել է Հարավային Կովկաս այցելելու Հռոմի պապի մտադրությունը:

ARMENTEL

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

1998 թ. հուլիսի 8-ից սեպտեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում իրականացվելու է 55/57 ավտոմատ հեռախոսային կայանի վերամիացումը թվային կայանի: Բաժանորդներին տեղեկացնում ենք, որ այդ ընթացքում հաջորդաբար կանջատվեն 55 եւ 57 նիշերով սկսվող հեռախոսահամարները:

Հայցելով Ձեր ներողամտությունը, միաժամանակ հայտնում ենք, որ վերամիացման հետ կապված բոլոր աշխատանքները ԱրմենՏել ՀՁ-ն կատարում է անվճար:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ

The Embassy of the United States of America has a vacancy for a *Protocol Assistant.* All candidates must have excellent working knowledge of English, Russian and Armenian. This vacancy is open to nationals of the Republic of Armenia. Candidates must complete an Application of Employment form which is available from the American Embassy guard's office located at #18 Marshal Bagramian street. Resumes, letters of employment and Curriculum Vitae *will not* be accepted. All applications must be received *before July 20, 1999.*

Qualifications required:
- At least three years of progressively responsible secretarial and related experience, at least two years of which should have been in protocol /or other secretarial work in a U. S. government agency;
- Fluency in English and Armenian;
- Ability to type at least 40 words per minute, and proficiency in operating word processing equipment;
- Good working knowledge of host government protocol guides and the general etiquette and social mores of ARMENIA.

ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ
ԽԱՉԲԱՌ
ՇԱԲԱԹՕՐՅԱ ԱԶԳ-ՈՒՄ
Փորձեք լուծել
եւ արժեքավոր մրցանակը Ձերն է

ԵՐԵՈՒՅԹԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

9 հուլիս

9.00 Հայլուր
9.20 Բարի լույս, Հայաստան
10.20 Հեռուստաթատրոն «Մոխրոտը»
11.15 Հենց այնպես
11.30 Արտակարգ պետ
11.40 3-րդ խաղակես
12.00 «Բեկե. լաո». Մանկ Գրիգորյանի ստեղծագործական երեկո
13.00 Հայլուր
13.15 «Երգենք ու ժպտանք»
17.00 Հայլուր
17.20 3-րդ պետ. ճանկրկան տան
18.00 Հեռուստաթատրոն «Մոխրոտը»
19.00 Սայրատաղա
19.30 Փաստագրական ֆիլմ «Մատենադարան»
20.00 3-րդ պետ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատակոգ
21.45 Դեմքեր
22.20 Գ/Ֆ «Ժայռը»
00.00 Հայլուր

Մշակույթ
19.00 Սուլտֆիլմ «Ցոնը եւ Տերին»
19.10 Զուգեղոդն Վերդի. արիաներ «Դիմակահանդես» օպերայից
19.20 Բնաբխարհ. բնական արգելանոցներ
19.45 Կարին Հիբս օբժիտոր եւ լուսանկարիչ
20.05 Հեռուստաֆուտբոլ
20.30 Լուրեր
21.05 Սերիալ «Նատոլեոնն ու Եվրոպան» (5-րդ մաս)
22.00 Սիրելի զմիմեանս
22.15 Մենանուն երգչուհին. Հայկանուշ Դանիելյան
22.55 Գեղֆիլմ «Էկզոտիկա»
00.40 Լուրեր

09.00 Տոնար
11.00 Գ/Ֆ «Աստվածների ալրաղացները» (5-րդ մաս)
ավարտին Լժար
19.00 Սուլտեր
19.30 Սուրհանդակ
19.50 Սամուլի խոսնակ
20.00 Չարլի Չապլինի վաղ ֆիլմերից «Խաղաղ փողոց»
20.30 Ասպարեզ
21.05 Չարլի Չապլինի վաղ ֆիլմերից «Անձրեւի տակ մնացածը»
21.30 Սուրհանդակ
22.00 Գ/Ֆ «Չինուհին»
23.30 Սուրհանդակ
00.00 Անդորր
00.05 Արքուր Էլբակյանի «Ուրքաք գիտեր բոլորովին ֆուն չունեմ» հեղինակային ծրագիրը
(02.30 Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
11.30-15.45 Բիզնես TV
16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Շնեմարդ Հարրին»
19.00 Նորություններ
19.15 Սերիալ «Կոմսուհի դե Մոնսորո»
20.15 Վավ. դետեկտիվ «Յուրայի՞ն, թե՞ բնանի: Սկանդալ Լուբյանկայում: 1985 թվականի գործը»
20.45 Ուրախ պատմություններ «Երալաշ» հանդեսում
21.00 Հրաշքների դաշտ
22.00 Ժամանակ
22.45 Նշանավոր խուզարկու Կոլոմբոն «Հանցագործության օրակը» դետեկտիվում
24.10 Կանացի պատմություն
24.40 Գ/Ֆ «Վիկինգի վրեժը» (դերերում՝ Ռ. Մոթլլեր, Ս.Օ. Թորսն, ԱՄՆ-Նորվեգիա, 1995 թ.)
02.05 Նորություններ

8.00-10.45 Բարի լույս, Ռուսաստան
8.20 Բոլորի շուրթերին
8.45 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
9.15 Հազար եւ մեկ օր
10.15 Հերթապահ բաժանմունք
10.45 Սպորտներ փոստով
11.10 Սերիալ «Միլեդի»
12.00, 15.00, 18.00, 21.00, 00.50 Լուրեր
12.35 Սերիալ երեխաների համար «Փոքրիկ թափառաշրջիկը»
13.30 Իմ ընտանիքը
14.30 Խանութ բազմոցի վրա
15.30 Սերիալ «Անտոնելլա»
16.20 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.20 Երաժշտություն, երաժշտություն
17.30 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Աշտարակ
19.00 Սուլտֆիլմ «Ընտանեկան կրկես»
19.05 Հոմեոպաթիա եւ առողջություն
19.15 Գ/Ֆ «Ոսկե ական» (2-րդ սերիա)
20.35 Բարեկամության սպարտակիադա
21.40 Մանրամասներ
21.55 «Քաղաքիկ»
22.30 Կինոյի ժամ. Իզաբելա Ռոսելինին, Թոմ Կոնտին եւ Ալեքսանդր Աբդուլովը «Վենետիկի պատարումը» ֆիլմում (Իտալիա-Ռուսաստան)
00.00 Պոդիում դ'արս
00.35 Հերթապահ բաժանմունք
01.20 Քրեական դրամա «Դատապարտյալի ուժը» (ԱՄՆ)

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» տեղեկագիրը: Վաճառվում է «Նոյյան տապան» (Հանրապետության հրապարակ), «Ավասա» (Աբովյան 25), «Русская книга» (Փ. Բուզանդի 1) գրախանութներում եւ մետրոյի «Բարեկամություն» կայարանի մուտքի մոտ գտնվող կրպակում

«Ազգ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Գրիգորյան 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 1084 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 8. 07. 1999 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@